№ 244 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9 № 244

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդպէս չէ կարելի գործել. Պարսկահպատակների գաղթումը. Վերջին տեղեկութիւններ. Վտանգված Բորչալուն. Տեղեկութիւններ գաւառից. Կովկասեան հայ-թուրքական համագումար. Հայ պատգամաւորութիւնը պարսից հիւպատոսարանում. Մամուլ. Բագուի կեանքից. Բաթումի դէպքերը. Նորագոյն երեւոյթների աշխարհից. Դժոխային ծրագիրներ. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՅԴՊԷՍ ՉԷ ԿԱՐԵԼԻ ԳՈՐԾԵԼ

Օտարոտի, բայց և բնորոշ մի երևոյթի առաջ ենք մենք կանգնած: Ռուսներ և վրացիներ միտինգներ են անում խորհրդակցելու հայ-թուրքական ընդհարումների մասին և յետոյ որոշումներ են կայացնում:

Ի՞նչ որոշում:

Խրատ կարդալ նաև հայերին, որ նրանք բարբարոս, արիւնարբու չը լինեն և չը յարձակվեն իրանց հարևան թուրքերի վրա:

Եւ դա համարվում է բարոյական գործ կատարել ու աղէտաւորներին օգնել:

Պարզամիտ հասկացողութիւն իրերի մասին:

Ձեր առաջ դրված է մի խոշոր հարց և դուք փոխանակ հարցը քննելու և լուծելու, աշխատում էք միայն մի կերպ դուրս պրծնել նրա լուծման դժուարութիւնից:

Բայց դուք բարոյական իրաւունք չունէք այդպէս վարվելու: Կամ դուք պէտք է լուրջ կերպով զբաղվէք այդ հարցով, կամ թէ բոլորովին պէտք է նրան չը մօտենաք:

Այն որոշումը, որ դուք կայացնում էք, ոչ միայն ոչ մի դրական հետևանք չէ առաջացնում, այլ և յարուցանում է զարմանքի և նոյն իսկ դժգոհութեան զգացմունք դէպի այն միսսիան, որ դուք յանձն էք առել այդ եղանակով:

Երևակայեցէք մի րօպէ, որ դուք կանգնած էք մի կողմից հուլիգանների և միւս կողմից բարդուղիմէոսեան գիշերներ սարքողների առաջ: Մի՞թէ դուք կը դիմէք հուլիգաններին և նրանց խրատներ կը կարդայիք այն մասին, որ նրանք բարբարոս չը լինեն և չը վնասեն ինկվիզիտօրներին:

Մի ուրիշ օրինակ. դուք գտնվում էք Օդեսսայում, Կիշինեվում, Գոմէլում և ձեր առաջ կանգնած են հրէաները և նրանց ջարդողները: Մի՞թէ դուք կը դիմէք հրէաներին և նրանց խրատներ կը կարդաք այն մասին թէ սպանել, ջարդել, աւերել և այրելը վատ բան է և կը համոզէք նրանց, որ այդպէս բաներ չանեն:

Վերցրէք դարձեալ մի այսպիսի օրինակ. Մօսկվայում ուսանողների և գիմնազիստների և առհասարակ ինտելիգենցիայի վրա յարձակվել են «օխոտնօ-րեադեան» հերոսները և նրանց ջարդում են: Մի՞թէ դուք կը դիմէք այդ ինտելիգենցիային և խրատներ կը կարդաք, որ նրանք չը ջարդեն, չը կոտորեն և հաշտ ապրեն իրանց յօշոտողների հետ:

Դրանք ի՞նչ քարոզներ են, ի՞նչ խրատներ: Ո՞րքան բարոյական արժէք ունեն այդպիսի յորդորները:

Մի՞թէ կարելի է ապրել այս երկրում և ոչինչ չիմանալ և չը ցանկանալ ոչինչ հասկանալ:

Ո՞ւր էիք դուք, երբ հայերը անմնամեծ զրկանքներով ու տանջանքներով մաքառում էին Գօլիցինեան րէժիմի դէմ: Եւ մի՞թէ Ռուսաստանի ազատագրական պատմութեան մէջ անջնջելի և խոր ակօսներով չէ արձանագրված այն մեծ պայքարը և դիմադրութիւնը, որ ցոյց տուին հայերը հին րէժիմին, չը վհատվելով նահատակների և մարտիրոսների ամբողջ շարքեր հանդէս բերելուց:

Այն ժամանակ, երբ հայերը ամենալարված կերպով մաքառում էին բռնակալական մի ամբողջ սիստեմի դէմ, դուք լուռ էիք խորին կերպով, իսկ ձեզնից մի քանիսը նոյն իսկ խնկարկում էին աշխարհի հզօրներին:

Անցաւ ժամանակ: Պատմութիւնը լուսաւոր էջ բացեց հայի անցեալ տառապանքների գնահատութեան համար: Եւ դուք այսօր անցեալի վերաբերութեամբ այն դիրքն էք վերցրել, ինչ որ մի ժամանակ հայն էր բռնել:

Բայց ներկայի վերաբերութեամբ դուք դարձեալ մեծ սխալի և բարոյական մեծ մոլորութեան մէջ էք: Դուք այսօր էլ չէք կարողանում հասկանալ բողոքվող և կռւող հայի դերը և կրկնում էք այն, ինչ որ հաճելի է Գօլիցինեան րէժիմի յետնորդներին:

Դուք այնքան մտաւոր ոյժ և բարոյական քաջութիւն չունէք, որ ասէք թէ սևը սև է և սպիտակը սպիտակ: Դուք այսօր էլ այնքան ինքնուրոյն չէք, որ կարողանաք պատռել Գօլիցինեան շրջանի ձեր աչքերին փռած շղարշը և ասել, որ հայը մեղաւոր չէ, որ հայը նահատակ է, որ հայը պրօվօկացիայի զոհ է, որ հայը մի չափազանց ողբերգական դաւադրութեան մարտիրոս է:

Այդ ասելու համար անհրաժեշտ է, որ դուք բարոյական քաջութիւն և մտքի կորով ունենաք: Այդ դուք կասէք մի քանի ժամանակից, մի քանի ամսից, կամ մի քանի տարուց յետոյ, երբ հայը ինքը իր ոյժերով, իր սեփական ջանքերով մի կերպ կը թօթափէ իրանից ներկայ արհաւիրքների ծանրութիւնը:

Բայց մեզ ի՞նչ օգուտ ձեր այդ միշտ ուշացած, միշտ զղջացած ձայներից ու խոստովանութիւններից:

Ձեր որոշումները դժբաղդաբար բացասական դեր են կատարում: Նրանք ցոյց են տալիս մեզ վրա յարձակվող թուրքերին, որ նրանք մեղաւոր չեն, որ նրանք դիմադրողներ են, որ նրանք գոնէ միայն այնքան են մեղաւոր, որքան հայերը:

Եւ մի՞թէ աւելի մեծ խրախոյս կարող էր լինել բարդուղիմէոսեան գիշերներ սարքողների, հրէական կոտորածներ կազմակերպողների կամ ուսանողական և ինտելիգենցիայի ջարդեր յօրինողների համար, քան այն, երբ դուք հալածվողին և հալածողին, կոտորվողին և կոտորողին, ջարդվողին և ջարդողին մի գծի, մի աստիճանի, մի սեղանի վրա էք դնում: Դա հէնց այն է, ինչ որ կը ցանկանային բոլոր չարագործ և չարամիտ մարդիկ:

Մենք յոգնեցինք տանջանքներից, մենք յոգնեցինք և մեր քարոզներից համերաշխութեան ու հաշտութեան մասին: Եթէ ուզում էք դրական գործ կատարել, կատարեցէք այդ դրական գործը և ձեռք վերցրէք պարզամիտ և թեթև քայլերից, որոնցով միայն վարկաբեկ է լինում խաղաղարար գործունէութեան գաղափարը:

ՊԱՐՍԿԱՀՊԱՏԱԿՆԵՐԻ ԳԱՂԹՈՒՄԸ

Թիֆլիսում և Անդրկովկասի զանազան քաղաքներում ապրող պարսկահպատակ թուրքերը, բաղկացած մեծ մասամբ Ատրպատական նահանգից մշակութեան համար իւրաքանչիւր տարի եկող բանւորներից, վերադառնում են իրանց հայրենիքը: Այդ գաղթողների մէջ կան և առևտրականներ ու մանր խանութպաններ, որոնք մի քանի տարիներից ի վեր ընտանիքով ապրում էին մեր երկրում:

Այդ հանգամանքը առիթ է տուել մի նոր մեղադրանք բարդել հայերի վրա հայատեաց խաւերի կողմից, թէ իբր պարսկահպատակները փախչում են հայերից կրած հալածանքի պատճառով, որովհետև թուրք-հայկական արիւնահեղ ընդհարումների ժամանակ հայերը իբր թէ անխտիր սպանում, աւերում են և պարսկահպատակներին, իբրև մուսուլմանների: Այդ մեղադրանքը եռանդուն կերպով զարգացվում էր և զարգացվում է դեռ ևս Բագուի մէջ բոյն դրած պան-թուրքական կամ պան-իսլամական խմբերի և ագիտատորների կողմից, որոնք ոչ մի միջոց չեն խնայում Պարսկաստանում ևս հայերի հալածանք և ջարդ առաջ բերելու, տարածելով կեղծ հեռագիրներով, նամակներով, զեկուցագրերով, թէ հայերը սպանում, կողոպտում են պարսկահպատակներին, և հետևաբար, աշխատում են տարածել այն համոզմունքը, թէ հայերը առհասարակ զինված են մուսուլմանների դէմ և հէնց այդ պատճառով էլ խտրութիւն չեն դընում թուրքերի և պարսկահպատակների մէջ:

Մեր բախտից, պարսից կառավարութիւնը աւելի ճիշտ գիտակ լինելով Անդրկովկասում կատարվող դէպքերին և ռուսաց կառավարութեան քաղաքականութեան, գնահատելով իրողութիւնները այնպէս, ինչպէս նրանք կան, վերահասու լինելով ճշմարտութեան իր դիպլօմատիայի միջոցով, մինչև այսօր ականջ չը կախեց չարամիտ թելադրութիւններին և կարողացաւ զսպել պարսիկ ամբոխի ֆանատիկոսութեան բռնկումը հայերի դէմ:

Սակայն հասարակական կարծիքի առաջ ևս արդարացնելու համար հայերի վրա զրպարտօրէն բարդված մեղադրանքը, անհրաժեշտ ենք համարում մի քանի բացատրութիւններ տալ, մանաւանդ որ յայտնի իրողութիւն է, որ թուրք-հայկական ընդհարումների ժամանակ Բագւում, Նախիջևանում և Թիֆլիսում վնասվել են շատ պարսկահպատակներ և այդ հանգամանքը, ինչպէս և այժմ նրանց գաղթումը հայրենիք, ծառայում են իբրև զէնք ագիտատորների ձեռքում մեղադրել հայերին:

Ամենից առաջ մենք պէտք է հաստա[illegible] ընդհարումներ, այլ թուրք-հայկական ընդհարումներ, այն է ընդհարումներ Անդրկովկասի շիա թուրքերի և հայերի մէջ: Ոչ մի իրողութիւն չէ եղել մինչև այսօր, որ իրաւունք տար ընդհանրացնել այդ ընդհարումները և ասել, թէ առհասարակ մի կողմից կռւում են հայերը, միւս կողմից մուսուլմանները: Մեզ վրա յարձակվողը, մեզ աւերողը, կողոպտողը գիտակցօրէն եղել է Անդրկովկասի թուրք տարրը և մենք հայերս պաշտպանվել ենք ու մեր ինքնապաշտպանութեան մէջ երբեմն ագրեսիվ ընթացք բռնել այդ թուրքերի դէմ: Երբեք և ոչ մի տեղ մենք գիտակցօրէն, դիտմամբ չենք գործել պարսկահպատակների դէմ: Ճիշտ է, ընդհարումների ժամանակ եղել են սպանվածներ և կողոպտվողներ պարսկահպատակներից, բայց դրա պատճառն այն է, որ առաջին՝ տեղական թուրքերը ամեն տեղ աշխատում էին սպառնալիքներով, ահաբեկմամբ, հարստանալու խոստումներով առաջ ձգել պարսկահպատակներին, որպէս զի իրանք քիչ վնասվեն և ապագայում ևս պատասխանատւութիւնը նրանց վրա ձգեն, ինչպէս այժմ անում են Նախիջևանի աւարառութիւնների վերաբերմամբ. երկրորդ՝ արիւնահեղ և խմբական յարձակումների ժամանակ շատ դժուար է զանազանել պարսկահպատակ թուրքին տեղական թուրքերից:

Ընդհակառակը, հայերը որտեղ հնարաւորութիւն է եղել, ամեն ջանք գործ են դրել, որ պարսկահպատակները չը վնասվեն, չը սպանվեն: Թիֆլիսի վերջին դէպքերի ժամանակ հայերը ահագին թւով պարսկահպատակներ ազատելով, պաշտպանելով, իրանց պահապանների ուղեկցութեամբ տարել յանձնել են նրանց պարսից հիւպատոսարանին, պահպանել են նրանց գոյքը, խանութները, յետ են առել թալանածը և վերադարձրել տէրերին:

Շատ տեղ պարսկահպատակներին թալանել, կողոպտել են տեղացի թուրքերը. իբրև ապացոյց առաջ ենք բերում հետևեալ իրողութիւնը, որ պատմված է տեղական լրագիրներից մէկում: Պարսկահպատակ Ալի Ջէյնալ օղլի յայտարարել է, թէ երբ Թիֆլիսում սկսվեց կոտորած հայերի և թուրքերի մէջ, նաև ուրիշ 8 հոգի պարսկահպատակներ, երեսի վրա ձգելով իրանց ամբողջ գոյքը, փախան Կարայեազ, այն յոյսով, որ այդտեղ պաշտպանութիւն կը գտնեն իրանց դաւանակիցների մօտ, բայց հէնց Կարայեազի մօտ նրանց վրա յարձակվում են մի քանի տասնեակ զինւորված թուրքեր և խլեցին նրանց ձիերը ու ունեցած փողերը: Երկար խնդրանքից յետոյ թուրքերը վերադարձրին միայն ձիերը, բայց, երբ նրանք՝ պարսկահպատակները վերադարձան Թիֆլիս, գտան բոլոր իրանց բնակարանները կողոպտված:

«Մենք կարծում էինք, ասում են նրանք, որ մեր գոյքը յափշտակել են հայերը, բայց բանից դուրս եկաւ, որ եկւոր թուրքերն են եղել, և մեր դաւանակիցները միայն մեզ չէին կողոպտել, այլ և մեր դրացիներից շատերին»:

Այս փաստը լաւ ապացոյց է, որ տեղական թուրքերը չեն խնայել և պարսկահպատակներին, իբրև թալանի և կողոպուտի ծարաւիներ:

Գալով պարսկահպատակների գաղթման՝ Պարսկաստան, պէտք է ասենք, որ այդ գաղթումը կատարվում է պարսից կառավարութեան կարգադրութեամբ: Կառավարութիւնը, տեսնելով որ պարսկահպատակները թուրք հայկական ընդհարումների ժամանակ վնասվում են, որ բացի դրանից, այժմ նրանք մնացել են անգործ և առանց որ և է աշխատութեան, իսկ նրանց մեծ մասը մշակներ և բանւորներ են, աւելի նպատակայարմար է տեսել, որ նրանք գնան իրանց երկիրը, մինչև որ Անդրկովկասում վերահաստատվի կարգը և խաղաղութիւնը:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի արկածեալ, որ եկել է Բորչալուի գաւառի Թրիալէթի գաւառամասից, տուեց մեզ հետևեալ տեղեկութիւնները.

Նոյեմբերի 23-ին թուրք հրոսակները յարձակվում են Բորչալուի գաւառի Կիւանէթ հայաբնակ գիւղի վրա, որի բնակիչները փախչում են մօտակայ գիւղերը և ապաստանում: Այդ լուրը անմիջապէս հաղորդվում է նախ Աղբուլաղի պահակին: Աղբուլաղից 47 զինւոր հայ սպայ Սարգիս Յովսէփեանցի առաջնորդութեամբ շտապում են օգնութեան: Հայ կորիձ սուրհանդակն էլ լսելով վտանգի մասին, իր փոքրաթիւ խմբով շտապում է աղէտի վայրը: Եկատերինենֆելդում հանդիպում են այդ երկու խմբերը և միասին դիմում դէպի Կիանէթ գիւղը:

Դեռ տեղ չը հասած, ճանապարհին նրանց հանդիպում է թուրք խուժանը, որ սկսում է դիմադրել: Մի կերպ ա[illegible] խուժանը և մտնում գիւղ: Այստեղ արդէն թուրքերը կատարել էին իրանց բարբարոսութիւնները:

Գիւղը թալանել էին, եկեղեցին մտել, կողոպտել սրբութիւնները և պղծել: Գիւղի հայերի տները թալանել էին: Բարեբաղդաբար հայ չէր սպանվել, որովհետև մի կերպ փախել էին հայերը:

Ապա այդ պահակը և սուրհանդակի խումբը 24-ին միասին դիմում են Ջանդար գիւղը: Ճանապարհին լուր են բերում Պօլէբ հայ-վրացաբնակ գիւղից, որ թուրքերը վրա են տուել և քշել տաւար ու ոչխար: Սուրհանդակն ինքը անձամբ լրաբերի հետ շտապեց Պօլէբ տեղեկանալու: Փոքր ինչ հանգստանալուց յետոյ, սպայ Յովսէփեանը իր զինւորներով հասնում է սուրհանդակին:

Նախ քան զօրքի գալը, այդ գիւղի հայ հովիւը կռւի է բռնվում թուրքերի հետ, որի ժամանակ սպանում է երկու թուրքի: Փամփուշտը սպառվելուց յետոյ թուրքերն սպանում են նրան: Նոյեմբերի 25-ին, թուրքերը լսելով, որ զօրքը և հայ գաղութը եկել են օգնութեան, անմիջապէս յօժարակամ յետ են բերում քշած տաւարն ու ոչխարը: Փոքր ինչ յետոյ էլ զղջալով աւարը յետ տալու վրա, մեծ հրոսակով գալիս յարձակվում են գիւղի վրա, որտեղ գտնվում էին զինւորներն ու հայ տղերքը: Երկու կողմից սկսվում է հրացանաձգութիւն, որի հետևանքը որոշ յայտնի չէ: Հայերի և զօրքի կողմից ոչ մի կորուստ չէ եղել, իսկ թուրքերի կողմից հաւանականօրէն եղել են սպանվածներ և վիրաւորվածներ, որոնց հետքերը փախցրել են թուրքերը:

Զօրքը տեսնելով փամփուշտը սպառում է, յետ է քաշվում դէպի Գօրնջուկ հայ-վրացական գիւղը, որտեղ ստանալով փամփուշտի մի փոքր պաշար, միանում է նոր եկած մի ուրիշ պահակի հետ:

Վնասված և թալանված հայերը գալիս գանգատվում են նորեկ պահակի ընդհանուր հրամանատար ռուս սպային, որը սակայն շատ անտարբեր է վերաբերվում, ասելով, որ ինքը չէ եկել թալանած ապրանքը յետ խլելու թուրքերից, այլ եկել է հաշտեցնելու կռվող կողմերին:

Այդ միջոցներին Դումանիս գիւղն են գալիս պրիստաւ Ջալօվ, հաշտարար միջնորդ Աբխազով, մի քանի թուրք աւագներ հաշտութեան թափոր կազմելու համար: Սակայն հայերը կասկածում են նրանց անկեղծութեանը և յայտնում, որ իրանք չեն թալանել թուրքերին, իրանք ոչինչ չունեն նրանց դէմ և միմիայն իրանք են անարդար կերպով տուժել:

Ամսի 26-ին թուրքերը յարձակվում են մօտակայ փոքրիկ Ղարաքիլիսա գիւղի վրա, թալանում են Ստեփան Յակոբեանի խանութն ու տունը: Հազիւ միայն խեղճ հայը փախչում, ազատվում է:

—

Երևանի ժամանակաւոր գեն.-նահանգապետ յայտնի Նացկևիչը դեկտ. 5-ին հեռագրում է.

«Նահանգում դրութիւնը չափազանց փոփոխական է. ամեն մի լուր տեղացիների մէջ յուզում է առաջ բերում: Այսպէս՝ վերջին օրերս Երևանը սաստիկ յուզվեց այն լուրով, որ իբր թէ Պարսկաստանից եկող մի խումբ հայերի կոտորել են, թէև այդ մասին ես ոչ մի տեղեկութիւն չեմ ստացել: Նախիջևանում մի զօրեղ հրդեհ ոչնչացրել է թուրքական խանութների $^1/_3$-մասը. մահմեդականները մեղադրում են այդ բանում հայերին: (Իսկ պ. Նացկևիչը մի՞թէ չըգիտէ, որ դա կազակների գործն է. ինչո՞ւ չէ հերքում— եթէ չէ ցանկանում պրօվօկացիան ուժեղացնել): Զանգիբասարում անկարգութիւնն սկսել են մահմեդականները (մի՞թէ միայն այդտեղ...), բաց անելով բերդանի հրացանի կրակ հետևակ զօրապահակի վրա: Վիրաւորված են 3 զինւոր, բոլորն էլ ոտից: Հրացանաձգութիւնը շարունակվեց ամբողջ օրը. այրվեցին (ով այրեց— մի՞թէ հայերը) շատ տներ և բոլորովին կողոպտվեցին: (Ամաչում է ասել, կողոպտել են զօրքերը): Բայց կողոպտված իրերի մեծ մասը յետ առնվեց տեղացի հայերից: (Իսկ հայերից կողոպտված իրե՞րը, պ. գեն.-նահանգապետ:) Նոր-Բայազէտի գաւառում մահմեդականները, Նադեժդինա գիւղի մալականների հետ միացած, յարձակվեցին մի խումբ հայերի վրա, որոնք գնում էին Գանձակի նահանգը՝ օգնութեան իրանց կրօնակիցներին. սպանված են 7 հոգի, ծանր վիրաւորված—7 հոգի: Այդ բոլոր դէպքերի առիթով քննութիւն է կատարվում և որոշվում է հայերի կրած վնասների չափը: Շարուր—Դարալագեազի գաւառում տեղի ունեցան մի քանի դէպքեր՝ հայերից տաւար տանելու և կողոպուտի: Յանցաւորների վրա դրված է դրամական տուգանք: Ընդհանրապէս դրութիւնը անհանգիստ է և պահանջում է «յատուկ արթնութիւն»:

—

Դալլեար կայարանից հաղորդում են, որ այդ կայարանում յափշտակված բազմաթիւ բեռներ տարել և թաքցրել են Դալլեար գիւղում:

—

Թիֆլիսից դէպի Պարսկաստան մեկնող Պարսկահպատակներն ահա մի քանի օր է լցված են [illegible] լրտեսներ, որոնք համոզում են այդ թշուառներին, որ «կօմիտէտն» է կարգադրել նրանց քշել Թիֆլիսից:

—

Դեկտ. 7-ին կայացաւ հայ-թուրքական խաղաղարար կօմիսսայի նիստը: Ընդունվեց միջնորդ դատարանի սկզբունքը և երկու կողմից վնասվածներին օգնելու համար օժանդակիչ ֆօնդ կազմել: Ֆօնդի չափը դեռ ևս որոշված չէ:

—

Դեկտեմբերի 4-ին, քաղաքիս 4-դ մասի Վօզնեսենսկայա փողոցի հերթապահ գիշերապաններից մէկը հարբած դրութեան մէջ իրեն թոյլ էր տուել ատրճանակ արձակել 3 անգամ օդում և շփոթ յարուցանել: Այդ գիշերապանը ընկերներից այդ գիշերը կալանաւորվելով միւս օրը ենթարկվեց թաղական ժողովի դատի և պատժի:

ՎՏԱՆԳՎԱԾ ԲՈՐՉԱԼՈՒՆ

Դեկտեմբերի 6-ին

Իմ առաջին նամակում գրել էի, որ Ծալկայի մասին դեռ տեղեկութիւնները պակասում են: Ծալկան կամ Թրիալէթի գաւառամասը մտնում է Բորչալու գաւառի մէջ: Այժմ մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ թուրքերը քշել են Գեօրունջուկ, Բալիչի ու Դումանիս գիւղերի նախիրները (որոնց ազգաբնակութիւնը խառը հայեր ու վրացիներ են), կողոպտել են Սադախլվում ու Լամբալլում երկու հրէաների խանութներ, իսկ Լոռում քշել են փոքր Ղարաքիլիսա և Շիշթափա հայ-կաթօլիկաբնակ գիւղերի նախիրները ու ոչխարները: Թալանչի աւազակախմբերը պատժել են նոյն իսկ այն թուրքերին, որոնք չեն համաձայնվել մասնակցել իրանց հետ, ինչպէս, Աւղուրախման Հախվէրդի օղլու 2000 պուդ ցորենը, Մամեդ Եարաղանօղլի օղլու ոչխարները: Այս հարիւրեակների մէջ մասնակցել էին Աղբաբի և Ղազախի թուրքերն էլ:

Համարձակ կերպով կարելի է ասել, որ Բորչալուում կատարված յանցանքները գլխաւորապէս կազմակերպած, բօրչալուեցուն յատուկ, աւազակային կողոպուտներ էին: Իբրև ապացոյց, որ թուրք գիւղացին չէր ուզում մասնակցել այս խայտառակ չինգիզխանական արշաւանքներին, կարող է ծառայել այն փաստը, որ երբ մի խումբ աւազակներ յարձակվեցին կողոպտելու Սադախլվում քրիստոնեաների խանութները, գիւղացի Նաղի Ադիգէօզալ-օղլին սպանեց յայտնի Ղարաչօպլի Ալիին (ղազախեցի) և գեօուրարխեցի Ալվաղին, իսկ մնացածները փախան: Կողոպտված իրերից գաւառապետը գտաւ և սրբատեղի մի աղալարի տանն էլ, բայց ափսոս, որ շտապով չեն խուզարկում բոլոր աղալարների տները, որոնք կարող են իրանց հասած չաղ բաժինները հետքակորուստ անել:

Դրօշակակիր են եղել՝ յայտնի հարուստ Մօլլա-Աբասը, որի մօտ ամենից շատ է գտնվել կողոպտված ապրանքներից, բէգլարբէգի Սոլյուն աղան, որը ձիուց վայր ընկնելով՝ ջարդել է գլուխն ու կուրծքի ոսկորները: Սպիտակ նշան ունէր կապած և Ամիրխան-աղա Սուլթանօվը: Գաւառապետի հարցերին թէ ինչո՞ւ նրանք կողոպտում են հայերին, միշտ ամեն տեղ էլ պատասխանում էին, որ իրանք իբրև Ցարի հաւատարիմ հպատակներ, պարտաւոր են պատժել Նրա թշնամիներին:

Շատ ուրախ ենք, որ վրաց ազնուականութիւնը մի խաղաղարար կօմիսսիա ուղարկեց մեր գաւառը, որը Եկատերինենֆելդում, իշխան Աբխազու մօտ ընթրելուց յետոյ, միւս օրը գնաց Բաշքէչէթ և վերադառնալով հրաւիրեց գաւառապետին և Եդիգարօֆներին ու վերադարձաւ Թիֆլիս:

Առ այժմ այդ կօմիսսիայի մասին ես ոչինչ չունեմ գրելու, բացի շնորհակալութիւնից, չը նայելով, որ նա չայցելեց գլխաւոր վտանգի ենթարկված վայրերը, չը հրաւիրեց գոնէ հայերից ոչ մի շուլավերցու: Բայց որովհետև կօմիսիայի հետ եղել է և վրաց լրագիրների թղթակից և մինչև անգամ ինչպէս ասում են, անգլիական լրագրի մի թղթակից էլ, ուստի անհրաժեշտ է իմանալ թէ կօմիսսիայի և թէ այդ թղթակիցների կարծիքն ու դատավճիռը թէ արդեօք Բորչալուում էլ չեն ուզում անմեղ հայերին մեղադրել: Խնդրում եմ «Մշակի» խմբագրութիւնից ուղարկել ինձ այն թերթերի համարները, ուր կը պատգրվէին վերոյիշեալների գրածները, որպէս զի իր ժամանակին հնարաւորութիւն ունենամ պատասխանելու, թէ որքան անաչառ են եղել նրանց կարծիքները:

Թուրք բէգերը, մոռանալով իրանց կատարած խայտառակութիւնները, մասներին փաթթել են ղարաքլիսեցի Մուսու սպանութիւնը, որին իբր թէ շուլավերցիք գնդակահարել են Շուլավերի այգիների մօտով իրանց գիւղը գնալիս: Որովհետև սա ուշադրութեան արժանի դէր է, քանի որ սպանողը թուրք է, անհրաժեշտ է պարզել ճշմարտութիւնը: Մուսան Ղօշաքլիսի կալուածատէր Վարդապարխեանի հաւատարիմ ծառան է, իր տիրոջ կալուածքը կողոպտողներին առանց քաշվելու մատնացոյց արաւ գաւառապետին. նա բացարձակ կերպով պաշտպանում էր հայերին, մատնացոյց արաւ և այն ղօշաքլիսեցի թուրքերին, որոնք կողոպտել էին այդ գիւղի կողքին գտնվող շուլավերցի եղբայրներ Տէր-Պօղոսեանների ջրաղացը: Մուսան ամսիս 2-ին գալով Շուլաւէր, [illegible] կեանի բարեկամին, որ շատ գողացված իրեր գտնվել են: Նոյն Մուսան Շուլաւէրի փողոցում իր մի խումբ ծանօթներին պատմեց, որ ղօշաքլիսեցի թուրքերը հայերի պատճառով իրան մատնիչ են անւանում ու հետևում են սպանելու: Եւ իրաւ, այդ օրը Մուսան գնաց ու սպանվեց Ղօշաքլիսա: Թուրքերը յայտնեցին ոստիկանութեան, որ Մուսան մեռնելիս ասաց մեզ, որ իրան գնդակահար արեց այգիների արանքով անցնելիս չափարների հետևից Արշակ Տէր-Պօղոսեանը, մի մարդ, որի մասին ոչ ոք երբեք հաւատալ չէ կարող: Հարց է, ինչո՞ւ հնարել են յանցաւոր Տէր-Պօղոսեանին, որովհետև նրանց ջրաղացը կողոպտողը այդ թուրքերն են, դրանով ուզում են վախեցնել Տէր—Պօղոսեանին, որ չը համարձակվի իր վնասը նրանցից պահանջելու:

Սև հարիւրեակներից կազմած զօրքը, որը չը յարձակվեց Շուլավերի վրա, համոզված լինելով, որ իրանցից էլ մինչև շատ զոհեր չը տան, չեն կարող վնասել այդ աւանին, որը գաւառի կենտրոնն է ու անհրաժեշտ էր առաջ դրանց ջարդել, մտածել է մի այսպիսի խորամանկ միջոցի դիմել. արդեօք չէ՞ կարելի առանց զոհեր տալու այդ հայկական մեծ աւանը խաղաղ, դիպլօմատիական միջոցներով աւերել: Ուստի, աղալարների մի խումբ, շուլավերցիների մի քանի թշնամիների օգնութեամբ, որոնց ազգով ով լինելը չեմ ուզում գրել, դիմեցին թէ ազնուականների կօմիսսայի թէ նահանգապետին թուրք ժողովրդի կողմից, որ այսուհետև թուրք ժողովուրդը իբր թէ բօյկօտ է յայտարարում ոստիկանութեան ու չի գնայ Շուլավէր երբէք, որովհետև հայերը կը սպանեն իրանց, ուստի խնդրում են կառավարչական բոլոր հիմնարկութիւնները տեղափոխել Եկատերինենֆելդ:

Շուլաւէրցիները, այս կարևոր հարցի պատճառով, տանուտէր Մեհրաբեանի հետ մի պատգամաւորութիւն ուղարկեցին նահանգապետի մօտ: Այդ մասին և զէնքեր խնդրելու գնաց Թիֆլիս և ազնուականների պարագլուխ Եդիգարօվ, իր հետ ունենալով բաւական թւով թուրքեր, որոնք համախոսականներ ներկայացրին գաւառապետին զէնքեր ստանալու: Զարմանալի պինդ երես. իրանք գողանում են, թալանում, այրում ու կրկին զէնք խնդրում, ինչի համար, ում դէմ. հայերի, այն հայերի, որոնք դեռ իրանց վարքով չոռ չեն ասել: Թուրք բէգերից առ այժմ ամենից անմեղ գտնվեց երկու կողմերի համար էլ Էմին աղա Աջալօվ:

Սարօ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բորչալուի գաւառ, դեկտեմբերի 7-ին. Թիֆլիսի հայ-թուրքական ընդհարումները արձագանք գտան Բորչալուի գաւառում: Նոյեմբերի 25-ին Դուխօբորի Ղարաքիլիսա գիւղում գտնվող Ստ. Յակոբեանցի խանութն եկան օտար և կասկածելի թուրքեր բերդան հրացաններով և պատրոնդաշներով: Մեր հարցին, թէ որտեղից էք գալիս, պատասխանում էին «Թոյդան» (հարսանիքից):

Միւս օրը, նոյեմբերի 26-ին, Բաշքիչէթ գնացի Թիֆլիսի մասին մանրամասն տեղեկութիւն իմանալու համար: Պրիստաւ Ջ.

Զաալօղլը նոր էր վերադարձել քաղաքից։ Զաալօղլը ինձ ընդունեց շատ թթված կերպով, նոյն իսկ չը բարեւեց։ Նա պատմեց Թիֆլիսի մասին, մեղադրում էր հայերին և ասում էր, որ հայ դաշնակցականները Թուրքերին կենդանի կենդանի խմբերով, թոկով կապած, ածում են Կուր գետը։

Գրիստալը ինձ միամտաբար ասելով. «գնացէք, հանգիստ եղէք, մեզ մօտ ոչինչ չի պատահի, միայն զգոյշ եղէք, հանգիստ եղէք»…

Կէս գիշերից անց Թուրքերը յարձակվեցին մեր խուտորի վրա, որ գտնվում է Բաշքիչեթից երեք վերստ հեռաւորութեան վրա դուխօբորական Ղարաքիլիսա գիւղում։

Մեր խուտորը Թալանեցին հետեւեալ Թուրք գիւղի բնակիչները՝ Նագուբլու, Շինդիլեար, Ղըզըլքիլիսա, Դալլար, Ներքին-Օրդուման և Բազաքլու, թւով մօտ երեք հարիւր հոգի, եկել էին սայլերով և ձիերով ապրանքը տանելու համար։ Խուտորի ապրանքն էր մանուֆակտուր, մանրունք, երկաթեղէն, ցորեն, գարի, մեղուանոց, ձի, 350 գլուխ ոչխար, առեւտրական տետրակներ և այլ մեծ քանակութեամբ ընթերցանութեան գրքեր. այդ բոլորը այրել, ոչնչացրել են։ Վնասը մօտ 40,000 ռուբլի է։ Ցանկարծակի եկած ես և մեր երեք հայ գործակատարները փախանք վրացիներին Միժա գիւղը, պաշտպանութիւն չը գտնելով դուխօբորների մօտ։

Մեր վրացի հարեւանները մեզ լաւ ընդունեցին, պաշտպանեցին երեք օր, յետոյ գնացինք իր քաջ բնակիչներով յայտնի Գամբարօղլի հայաբնակ գիւղը։

Մեզ հետ էր նաև չուլաւերցի մի դերձակ-ներկարար, որի արհեստանոցը Թուրքերը Թալանեցին 25-ի գիշեր, տանելով մի կարի մեքենայ, արխալուխներ, կանխիկ փող մօտ երեսուն ռուբլի. չուլաւերցու ընկերը գնացել էր Նագուբլու՝ Թուրքի հարսանիքի. ասում են, կենդանի է առ այժմ։

Գամբարօղլի կամ Գօրանջուկ հասնելուց յետոյ, միւս օրը առաւօտեան զինված գիւղացիների հետ գնացինք Գօլէզ գիւղը պաշտպանելու, ուր եկել էին Բէլիյ-կլիւչից կէս վաշտ զինուորներ, նոյն նպատակով։

Գօլէզը մօտ 50 տուն բնակիչ ունի, որոնք մեծ մասամբ վրացիներ են։ Գիւղը երեք կողմից շրջապատված է բարձր լեռներով, որոնց հետեւում գտնվում են Ղըզըլ-քիլիսա և Դալլեար Թուրք գիւղերը։ Լեռների գագաթներին կանգնած էին 4—5 հարիւր Թուրքեր, բոլորն էլ լաւ զինված, իսկ մեր Թիւը զինուորների հետ միասին 100-ի էլ չէր հասնում։

Առաջին անգամ գնդակ արձակեցին Թուրքերը, որոնց պատասխանեցինք մենք։ Կռիւը շարունակվեց ամբողջ օրը անընդհատ։ Զինուորների մօտ միայն 30-ական պատրոն։ Օֆիցերը միւս օրը հրամայեց գիւղացիներին գաղթել Գամբարօղլի, չուզելով զինուորներին և գիւղացիներին վտանգի ենթարկել, ռազմամթերք քիչ ունենալու պատճառով։ Թուրքերը առաջի օրվայ կռվի մէջ թողեցին 30 սպանված և կրկնակի վիրաւոր, (այն ինչ մեզանից ոչ ոք չը վնասվեց)։ Միւս օրը Թուրքերը դարձեալ սկսեցին գնդակ արձակել, որին մենք բոլորովին չը պատասխանեցինք, [illegible] հասնում. մենք յետ նահանջեցինք Գամբարօղլի։

Բարօն ֆօն Կուչենբախի որդին, քաղաքակիրթ գերմանացի Կարլ Ալէքսանդրովիչը, ի սէր իր պանրագործարանի և կալուածքների, պաշտօն էր կատարում հարիւր Թուրքի գլուխ անցնելով, հայեր որսալով։ Վիլհէլմ կայսրի արժանաւոր աշկերտ…

Զալալօղլեցի Զաքար Մատթէոսեանները և Ս. Տէր-Գրիգորեանը, որոնց պանրագործարանը գտնվում է Շուլաւէր—Քալաֆայում, որ Թալանի և կրակի մատնվեց, գտնվում են Դամալու Թուրք գիւղում անվնաս, պաշտպանութիւն գտնելով Հասան, Սուլէյման և Թանդրօղլի Օվչի-օղլիներից։

Մի ուրիշ ընտանիք Ջալալօղլեցիներ գտնվում են վերի Օրդումանում, պաշտպանութիւն գտնելով Թուրքի տանը, Իսայ Այմադ Օղլի անունով։

Մեզ մօտ եկաւ խաղաղարար կոմիսսիան, գլուխ ունենալով գեներալ Զաւչավաձէին։ Նոր նշանակված գաւառապետ կապիտան Բէգանօվը խոստացաւ ուղարկել 100 կօզակ, վերադարձնել կողոպտված Թալանած ապրանքները։

Իբրև թէ հաշտեցրին Թուրքերին և հայերին մեզ մօտ։

***

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը ստացել է Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Մալամայից դեկտ. 4-ին հետեւեալ գրութիւնը. «Ձերդ Սրբութիւն. Անհրաժեշտ համարելով, համաձայն գեներալ-ադիւտանտ կոմս Վորոնցով-Դաշկովի արտայայտած ցանկութեան, հաստատել Փոխարքայի խորհրդին կից առանձին խորհրդակցութիւն՝ մշակելու համար միջոցներ, որոնցով հնարաւոր լինի ապագայում զինուորված ընդհարումների առաջն առնել հայերի ու մուսուլմանների մէջ, նման այն ընդհարումներին, որոնք տեղի ունեցան այս տարի Անդրկովկասի շատ քաղաքներում —դիմում եմ Ձերդ Սրբութեան ամենախոնարհ խնդիրքով՝ ընտրել յիշեալ խորհրդակցութեան մասնակցելու համար, քան անձինք Թիֆլիսի, Գանձակի, Բագուի և Երևանի նահանգների ազգաբնակութիւնների բոլոր դասակարգերից և Ձեր ընտրած անձանց մասին տեղեկացնել ինձ հնարաւոր կարճ միջոցում»։

Կովկասեան Թուրք-հայկական համագումարի հարցը, ինչպէս յայտնի է, յարուցել է և վերջին 48 ներկայացուցիչներից բաղկացած Թուրք-հայկական խորհրդակցութիւնը՝ Դումայի դահլիճում։ Ընտրված է մինչև անգամ 12 անդամներից բաղկացած մի խառն մասնաժողով, այդ համագումարի ծրագիրը մշակելու համար։

Մենք նախօրդ անգամ յայտնեցինք, որ կառավարութիւնը, լուծելով Զանկօվսկու նախագահութեամբ գործող յանձնաժողովը, իբրև իրական միջոց Թուրք հայկական ընդհարումներին վերջ դնելու համար դիմել է Կովկասեան համագումարի։ Սակայն ի նկատի ունենալով, որ այդ համագումարի ոչ ֆունկցիան, ոչ իրաւասութիւնը և ոչ կազմը որոշված չէ և յայտնի չէ արդեօք բացի Թուրքերից և հայերից ուրիշ ազգերի ներկայացուցիչներ եւս մասնակցելու են, Վեհ. Կաթողիկոսը, ինչպէս յայտնեցին մեզ, դիմել է գեներալ Մալամային, խնդրելով լրացուցիչ տեղեկութիւններ հաղորդել համագումարի ֆունկցիայի, իրաւասութեան և կազմի մասին, որից յետոյ կարգադրութիւն կանէր ընտրել հայերի կողմից ներկայացուցիչներ։ Ահա այժմ այսքանն է միայն յայտնի, որ 20 ներկայացուցիչ պահանջվում է հայերից, 20 շիա-մուսուլմաններից և 20 սիւննի-մուսուլմանների կողմից։

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԻՑ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆՈՒՄ

Մի պատգամաւորութիւն էր ընտրվել, բաղկացած պ. պ. Ա. Քալանթարից, Ա. Մէլիք-Աղամալեանից, Ս. Յառուկեանից, Տ. Յովհաննիսեանից և Հ. Առաքելեանից ներկայանալու պարսից հիւպատոսին և յանուն Թիֆլիսի հայ ազգաբնակութեան՝ նախ, մատուցանելու շնորհակալութիւն և արտայայտելու երախտագիտական զգացումներ Շահնշահի կառավարութեան, երկրորդ բացատրելու այն միջոցները, որ հայերը վերջին դէպքերի ժամանակ ձեռք էին առել պաշտպանելու պարսկահպատակների կեանքը և գոյքը։

Երէկ, հինգշաբթի, դեկտ. 8-ին պատգամաւորութիւնը ներկայացաւ պարսից ընդհանուր հիւպատոսարանի կառավարիչ Արփօղ խանին՝ և յայտնեց նրան իր միտքերը։ Հիւպատոսի պաշտօնակատարը շնորհակալութիւն յայտնելով պատգամաւորութեան այն ջերմ զգացումների համար, որ Թիֆլիսի հայ ազգաբնակութիւնը ի դէմս նրա արտայայտում է պարսից կառավարութեան հիւպատոսարանին, յայտնեց մի և նոյն ժամանակ հետեւեալը։ Ես և մեր հիւպատոսարանի բոլոր պաշտօնեաները կարող ենք հաստատել և վկայել, ինչպէս արդէն պաշտօնապէս զեկուցել ենք արեգակնափայլ Շահնշահին, սադրազամին և արտաքին գործերի մինիստրութեան, որ արդարև, Թիֆլիսի վերջին դէպքերի ժամանակ հայերը անձամբ Թւով պարսկահպատակներ ազատելով, պաշտպանելով, պահապանների ուղեկցութեամբ խումբ խումբ բերում հասցնում էին մեր հիւպատոսարանը և յանձնում մեզ և հոգ էին տանում, որ նրանց գոյքը չը Թալանվի ու չը կողոպտվի։ Իրանք ազատված պարսկահպատակները այդ մասին յայտնել են մեզ շնորհակալութեամբ։ Մեր խնամակալ Շահը և սադրազամը, ինչպէս և ամբողջ կառավարութիւնը տոգորված են լաւագոյն զգացումներով հայերի վերաբերմամբ և ոչ մի միջոց չեն խնայի, որպէսզի Պարսկաստանում որև է խռովութիւն կամ թշնամութիւն սկսվի հայերի դէմ։ Շահը մի աչքով է նայում իր բոլոր հպատակներին—և մուսուլմանի և հայի և հրէայի վրա, բայց առանձնապէս գնահատում հայ տարրի կուլտուրական յատկութիւնները, Նորին Մեծութիւնը մեծ հնարաւորութիւն է տալիս հայերին զարգանալ և բարգաւաճել անտեսապէս ու ազգայնապէս, մանաւանդ առեւտրական ասպարէզում։ Մենք խորապէս ցաւում ենք, որ հայերի և Թուրքերի մէջ ընդհարումները շարունակվում են, բայց յոյս ունենք [illegible] խոհեմ և [illegible] դնել այդ ցաւալի ընդհարումներին։

Պատգամաւորութիւնը իր ցաւը յայտնեց, որ, ընդհարումների ժամանակ, պարսկահպատակները եւս վնասներ են կրել և այժմ ստիպված են գաղթել, բայց հայերը ոչ մի միջոց և ջանք չեն խնայել և չը պետք է խնայեն ամեն կերպ պահպանելու և պաշտպանելու պարսկահպատակներին, որոնց դէմ հայերը ոչ մի թշնամական զգացում չեն տածում։

Հիւպատոսը յայտնեց, որ պատգամաւորութեան արտայայտած զգացումները հեռագրով կը յայտնէ Շահնշահին և կառավարութեան։

ՄԱՄՈՒԼ

Ժընեւի «Դրօշակը» նոյեմբերի իր համարի մէջ տալիս է «Դարաւոր Պայքարը» վերնագրով մի առաջնորդող, որ այսպէս է ներկայացնում կովկասեան հայ-թուրքական արիւնոտ աղէտը.

Զարհուրանք ու հուսահատական խելագարութիւն. ահա թէ ինչով կարելի է բնորոշել Կովկասի ներկայ կացութիւնը։ Որքան և հեռու լինենք ազգայնական նեղսրտութիւնից, ինչքան և նողկալի լինի մեզ համար կշտամբանք շպրտել մի ցեղի երեսին, այնու ամենայնիւ ստիպված ենք տխրութեամբ, սրտի խորին ցաւով արձանագրել, որ ամիսներից ի վեր Կովկասի մի ծայրից միւսը յեղյեղվող սոսկումները անհատների գործ չեն, այլ մի ամբողջ ժողովրդի, կատարեալ Թաթարական ժողովրդի։ Կատաղի ու արիւնարբու՝ նա մի օր, մռայլութեան արժանի նզովված օր, դուրս սողաց դեղին անապատներից և գանգեր կրծելով խաղաց դէպի մեր երկիրը, ինչպէս աւազի հեղեղ…

Որքան քաղաքակրթութիւններ են մնացել այդ ժողովրդի ծնած բանակալութեան ոտքերի տակ, այլ եւ երբէք չը բարձրանալու համար։ Համամարդկային անհատներում էվոլիւցիայի մէջ ազգերը աշխարհ են գալիս իրանց խօսքն ասելու, իրանց հանճարի գեղեցիկ Թափը չափելու։ Թաթարական ժողովուրդն էլ դարերից ի վեր իր մոլի ուժերի արտայայտութիւնն է տալիս աշխարհին՝ աւերելով ու ոչնչացնելով այն բոլորը, ինչ մարդկային առաջադիմու միտքը երկնել է դարերի երկունքով, ինչ նրա հոգին սեփել է իր հոյակապ թռիչքներով։

Զարհուրելի անցեալ ունի այդ խաւար ու դժբախտ ժողովուրդն իր թիկունքին։ Թէմուրլէնգների ու Չինգիզխանների մորթոտված երեխաների արիւնով են լողացել և իրանց արեւաբուխ փառքը յաւերժացնելու համար մարդկային գանգերից կոթողներ կանգնեցրել։ Միամտաբար այդ անցեալը անդարձ համարեցինք, բայց կովկասեան Թուրքերը չուզեցան մոռանալ իրանց «մեծ» հայրերի այդ «սխրագործութիւնները»։ այլ կերպ ինչպէս բացատրել, որ նրանք դեռ սիրում են իրանց ձեռքով յօշոտված երեխաների փոքրիկ շնչերին ձգել, ինչպէս Մինքենդում, և յղի կանանց արգանդը ճեղքել վայելելու համար գոլ արեան հրէշաւոր հաճոյքը, ինչպէս Բագւում։

Անհերքելի է սակայն, որ այն օրը, երբ նրա ապագայ սերունդները կազատվեն հայրերի արիւնածարաւ բնազդներից, դարերի կուտակած զազրելի ատավիզմից, երբ նրանք ներկայ խաւարից ու զարշանքից կը բարձրանան մինչև մարդկայնութիւնը, զայրոյթով ու ամօթով կը հրաժարվեն այդ ստորացուցիչ, այդ անփառունակ ու ոճիրներով հարուստ անցեալից։ Երբ և իցէ կը գայ այդ օրը, անկասկած պիտի գայ, և ոչ ոք այնպէս կարօտ չէ նրա գալստեանը, այնպէս նախանձախնդիր չէ թաթար ցեղի կուլտուրական առաջադիմութեանը, որպէս հայ ժողովուրդը։

Եւ դա առանց խորունկ պատճառների չէ։ Մի անօրինակ ճակատագիր կամեցաւ, որ հայ ժողովուրդը, Արևելքի ժայռին մեխված այդ Պրոմէթէոսը, իր չարաբաստ թիկունքին կրի ասիական խուժանների բոլոր հարվածները, որ յանկական իշխայի և ասիական վայրենի ցեղերի գազանային բնազդների միջև մարդ նախնական [illegible] ամբողջ դարեր։ Հայկական ու անհատական կռիւ, որի վախճանը դժուար է կռահել։ Անյայտ կայ, թէ մէ պիտի յաղթանակի. արդեօք փոքրիկ հայ ժողովուրդը, որ յամառ ու անյողդողդ շարունակում է իր քաղաքակրթական ծանր միսիան, թէ բազմամիլիօն խաւար ոյժերը, որոնց [illegible] կան նուաճողութիւնների, լայն համամարդկային գաղափարների հանդէպ։ Եւ դարեր շարունակ [illegible] Ջարդելու մեր ճիգերը բազմապատկեցին մեզ շրջապատող խաւարչտ ցեղերի անասնական ու վայրենի կրքերին, բազմացրին ու խորտակեցին։ Ահա ծագում մեր անհատական տառապանքի, այլ եւ պատմական չարիքի, որ մեր գլխին ծանրացաւ։ Զարհուրելի է ասածը։ Ո՞վ կարող է երբ և իցէ հաշիւ տանել մեր ստացած բոլոր վերքերը, ո՞վ կարող է չափել մեր կրած խորութիւնը անհուն յուսահատութիւնների հանդէպ, երբ մեր հաւատը, մեր ազնուութիւնը վարվել է, ապէս մրրիկների ցանած փոշի։ Մեր խրախական պատմութիւնը անցեալի մեծ թաղումն գրքի մէջ է, ոչ ոք, ոչ ոք չի կարդացել այն և չի կարդայ երբէք։

Անխուսափ դիլեմմայի առաջ ենք կանգնած այժմ։

Բազուկներս բարձրացնում ենք վարանելով, զարկում ենք ափսոսելով և նզովում ենք մեր հարվածը, երբ նա յաջող է, որովհետև կուզէինք ոչ թէ աւերել, ոչնչացնել, այլ կրթել, բարձրացնել, առաջ տանել։ Եւ երբ մեզ են հարվածում, բռունցքը մեզ ամփոփում է և ուժգին, մենք դարձեալ նզովում ենք այդ անմիտ հարվածը և մեր հոգու խորքում լալիս այն բռնի, բռնագրաւած անգիտակցութեանը, որ անկարող է ըմբռնել մեր հոգին, մեր անձերը, մեր գաղափարական վսեմ թռիչքները։ Մենք, [illegible]։

Եւ արտասովելի է մտածել, որ մեզ վիճակված այս անօրինակ ճակատագիրը մինչև վերջին ծանր փորձութիւնները՝ չը դարձաւ մեզ համար քաղաքական իմաստութեան աղբիւր, չը սովորեցրեց մեզ այն, ինչ ամենահասարակ կենդանիներին ասում է ինքնապաշտպանութեան բնազդը զգուշութեան անողորմ կռւի մէջ։ Ցաւալեցինք, անթիւ անարդարութիւններ և զրկանքներ կրեցինք աշխարհում և մնացինք միշտ լաւատես մեզ շրջապատող կասկածելի հարևանների վերաբերմամբ, սիրեցինք պատուհասները, ինքնախաբէութիւնը և մեզ քաղաքակրթական ճիգերի ամենագեղեցիկ արտայայտութիւնները այսպիսով ծնած օրից սիզիֆեան աշխատանքներ եղան։ Գայլերի և բորենիների մէջ մենք առանց ժանիքների աշխարհ եկանք, և արիւնարբու, աւազակաբարոյ հարևանների կողքին ամբողջ դարեր բաւականացանք միայն բարին երազելով. պատմութեան անողորմ դասերը մեզ համար պարապ տառերի հեքիաթներ եղան այն ժամանակ, երբ մեր չորս կողմում աւերիչ ուժերը սառնասրտօրէն դանակ էին սրում։ Մտաւորապէս չը պատրաստվեցինք [illegible] մարտիկներին…

Մենք միշտ կոյր ենք եղել։

Այնուհետև նկարագրելով ռուս բիւրոկրատիայի կատարած զարհուրելի դերը այդ արիւնահեղութիւնների մէջ, Դաշնակցութեան օրգանը գալիս է այն եզրակացութեան, որ արիւնոտ ճակատագրին մատնված հայ ազգը կարող է միայն զինված ինքնապաշտպանութեան մէջ գտնել իր փրկութիւնը։

*

Վլադիկավկազում սկսեց հրատարակվել մի նոր ռուսերէն ամենօրեայ թերթ՝ „Весь Кавказъ“ անունով։ Նոր լրագիրը, ինչպէս երևում է մեր ստացած առաջին փորձական համարից, պիտի հետեւէ սահմանադրական—դեմօկրատ ուղղութեան, յատկապէս առաջ մղելով Կովկասի կուլտուրական և քաղաքական շահերը. —համահաւասարութիւն Ռուսաստանի հետ, տեղական ազգերի ազատ զարգացում։ Հողային հարցին առաջնակարգ կարևորութիւն տալով, լրագիրը պարզում է «Կովկասը կովկասցիներին» դրօշակը. դա հասկացվում է այն մտքով, որ Ռուսաստանից գաղթականութիւններ չը պիտի հաստատվեն Կովկասում, որի բոլոր ազատ հողերը պիտի յատկացվեն բնիկ ժողովրդին։ Իր բովանդակութեամբ, գրական դէմքով լրագրի այս համարը լաւ տպաւորութիւն է թողնում։

ԲԱԳՈՒԻ ԿԵԱՆՔԻՑ

III

Գալով այն գրականութեան, որ գրվել է ռուսահայերի կեանքով, յօդուածագիրը ասում է.

Գրողների փոքրամասնութիւնը շօշափել է տեղական կեանքը։ Իրանց գրուածքների նիւթ նրանք առնում են գիւղը և գիւղացիութիւնը, և այսպիսով, մեռած նարօդնիկութիւնը նրանք յարուցին մեր մէջ։ Այս տեսակի գրողները նկարում են մի կողմից մեր գիւղացիների աղքատ դրութիւնը, իսկ միւս կողմից գիւղական վաշխառուների արարքները, բայց այդ երևոյթների պատճառը նրանք չեն որոնում սօցիալ-տնտեսական զարգացման մէջ, այլ առանձին անհատների բնաւորութեան մէջ։ Գրողների այդ կարգը անհաշտ կռիւ է յայտարարել կեանքի մի երևոյթին, այն է, ժողովրդի տեղափոխման գիւղերից արդիւնաբերական կենտրոնները, մի բան, որ դարձեալ առաջ են բերում տնտեսական զարգացման նոյն օրէնքները. բայց հաշւի առնել այդ օրէնքները, ի հարկէ, չեն ուզում մեր գրողները։ Նրանք ասում են. ժողովուրդը փչացել է, հրապարակել է և գիւղում աշխատել չէ ուզում։

«Այս երկու ուղղութիւնները (այսինքն Թիւրքիայի գաւառ և ռուսահայ գիւղացին) մինչև այժմ էլ տիրում են մեր գրականութեան և մամուլի մէջ։ Երկու ուղղութիւնները միացնող օղակն է ժողովրդի սրբութիւն սրբոցը—ժողովրդի լեզուի, կրօնի և սովորութիւնների պաշտպանութիւնը»։

Այստեղ էլ յօդուածագրի ունեցած տեղեկութիւնները կցկտուր են, վայր ի վերոյ, աւելի անեկդոտներից, քան անմիջական բարեխիղճ ուսումնասիրութիւնից դուրս բերած եզրակացութիւններ։

Սկսենք վերջից։

Ճիշտ է, հայ գրականութեան ամենամեծ, վիթխարի ջանքը եղել է պաշտպանել մայրենի լեզուն, ժողովրդի այդ խոշորագոյն սրբութիւն սրբոցը։ Ուրիշ կերպ նա չէր էլ կարող հայ գրականութիւն լինել։ Եւ մեզ ապշեցնում է յօդուածագրի միանգամայն Թեթեւամիտ վերաբերմունքը մայրենի լեզուի հարցին։ Նա կարծէք հայ գրականութեան մեղքերից մէկն է համարում լեզուի պաշտպանութիւնը։ Եւ այդ աւելում է այժմ, երբ ինքը, սօցիալ-դեմօկրատական, պաշտօնապէս ճանաչել է իւրաքանչիւր ազգի մայրենի լեզուի անաղարտ, կարևոր, առաջնակարգ նշանակութիւնը, երբ նա հրապարակով գանգատվում է թէ խոշորաքանչիւր ազգ պիտի գաղափարակից իր մայրենի լեզուով, պիտի այդ լեզուն գործածէ իր հրապարակային գործերի մէջ։ Արդեօք ինքը, այսպիսի ակամբով խօսող սօցիալ-դեմօկրատը չի գիտէ թէ ինչ է ուսուցանում սօցիալ-դեմօկրատական գիտութիւնը։—Կասկածելի է, շատ կասկածելի։ Եթէ փոքր ի շատէ լուրջ կրթական լինէր, այսպիսի ոճէտ մոլորութեան մէջ չէր ընկնի։

Եկեղեցու վերաբերմամբ հայոց առաջնորդ մամուլը այն կարծիքի է եղել, որ այդ հիմնարկութիւնը պիտի պահվի, քանի որ հայ ազգը ապրում է կրօնա—միապետական բռնակալութեան սիստեմով ապրող պետութիւնների մէջ։ Այդ սիստեմը հպատակ ազգերի միայն կրօնական ինքնուրոյնութիւնն է ճանաչում, ապա ուրեմն հայ ազգը չէ կարող հրաժարվել իր այն միակ հիմնարկութիւնից, որ տալիս է նրան իրաւունք և հնարաւորութիւն պաշտպանելու իր ազգային շահերը։ Նայեցէք Պարսկաստանում ապրող մի բուռն հայ ժողովրդին։ Այնտեղ կառավարութիւնը ճանաչում է հոգեւորականներին միայն, որոնց յատկացրել է ոչ միայն կրօնական, այլ և քաղաքացիական իշխանութեան ֆունկցիաներ։ Իբրև հայ, իբրև քրիստոնեայ, պարսկահպատակ կամ Թիւրքահպատակ հայը կարող է փոքր ի շատէ պաշտպանութիւն գտնել իր եկեղեցու բակում, իր առաջնորդարանում։

Այս սիստեմից շատ էր զանազանվում Ռուսաստանի հին ռէժիմը։ Հայը դպրոց կարող էր հիմնել ոչ թէ իբրև ազատ քաղաքացի, այլ իբրև կրօնական համայնք, իր կրօնի շահերի համար։ Հայ ժողովուրդը իր հիմնարկութիւնները պահպանել կարող էր եկեղեցական կալուածների, կրօնական տուրքերի միջոցով։ Որքան խիստ էր բիւզանդականութեան ոգով տոգորված ռուս բիւրօկրատիան ռուսացման իր ջանքերի մէջ, այնքան հայը անհրաժեշտութիւն էր զգում իր եկեղեցու հովանու տակ պատսպարվել։

Ահա ինչ տեսակէտով, ինչ ռէալական շահերի համար էր պաշտպանվում եկեղեցին։

Գալով ազգային սովորութիւններին, կասենք, որ ծայրայեղ անգիտութիւնը միայն կարող է պնդել թէ գրականութիւնը պաշտպանում էր նրանց։ Մենք, ի հարկէ, նկատի ունենք առաջաւոր գաղափարներով տոգորված գրականութիւնը։ Պահպանողականութիւնը ոչ մի տեղ հաշւի չէ առնվում մի ազգի առաջադիմական ջանքերը գնահատելու համար…

Հայ մամուլը և գրականութիւնը, ճիշտ է, գիւղական կեանքով են ամենից շատ զբաղվել։ Բայց ասել թէ դա ռուսաց նարօդնիկութեան կոյր հետեւողութիւնն էր, նշանակում է ոչինչ չհասկանալ։ [illegible] այն է, որ մեր գրականութիւնը միշտ եղել է ռամկասէր, դեմօկրատ։ Հայ ազգը բաղկացած է երկու մասերից. մեծը, ամենազլխաւորը, ամենակարևորը աշխատող դասակարգ—գիւղերում հողագործ ժողովուրդ, քաղաքներում արհեստաւոր, իսկ փոքրը, աննշանը, բայց տիրապետողը—վաճառականական դասակարգ կամ բուրժուազիա։ Գրականութեան մէջ աշխատողների մեծագոյն մասը եղել են առաջին, աշխատող դասակարգի որդիները։ Գրականութիւնն էլ գլխաւորապէս այդ դասակարգն է պաշտպանել, նրանից է ստացել նիւթ և բովանդակութիւն։ Մեր առաջին ինքնուրոյն վէպը, «Վէրք Հայաստանին» երկու կարևոր յատկութիւններ ունի. 1) դա զուտ գիւղական վէպ է, 2) ազատական տենդենցիայով տոգորված է։

Այդ երկու գլխաւոր յատկութիւնները միացել են այն ժամանակից, այսինքն 40-ական թւականներից մինչև այսօր։ Մեր վիպագրութիւնը, աննշան բացառութիւններով, յարձակողական, մերկացնող ոգի է ունեցել մինչև այսօր։ Բողոք և կռիւ հարստահարութեան դէմ, զրկվածի, տանջվողի դատ—ահա ինչով է նա ապրել։ Եւ որովհետև հարստահարողը միշտ բուրժուա դասակարգն է, այդ պատճառով մեր գրականութիւնը սկզբից և եթ կրել է իր մէջ մի [illegible], անխնայ պայքար բուրժուազիայի դէմ։ Գիւղում դա վաշխառուն է, քաղաքում—աղան, վաճառականը, կալուածատէրը։

Ճիշտ է, այդ կռիւը դասակարգային սկզբունքի վրա չէ եղել հիմնված. բայց հարստութիւնը իբրև [illegible], կալուածատէրը իբրև անողորմ շահագործող—այս մօտիվները կրկնվել են հարիւր ու հազար անգամ և անշուշտ պատրաստել են մարդկանց, անշուշտ դրել են աշխատաւոր, հարստահարված մարդու մէջ գիտակցութիւն, որ իր վերաբերմամբ գործադրվում է ամենամեծ, ամենակոպիտ անարդարութիւնը։ Մեղադրել, որ հայոց ամբողջ գրականութիւնը զուտ մարքսիստական չէ եղել, այնքան անմիտ մի մեղադրանք է, որի մասին չարժէ էլ խօսել։ Երբ երևոյթները, բազմատարր կեանքը դուք բերում դնում էք մի փորձաքարի, մի աշխարհայեցողութեան պրիզմայի տակ և այդ նեղ ու անձուկ պատուհանից էք վճիռներ արձակում, այդտեղ արդէն ձեր խօսքը ոչինչ արժէքութիւն չէ կարող ունենալ։ Երևոյթը պէտք է վերցնել իբրև երևոյթ իր ժամանակի, իր հանգամանքների, իր կատարած դերի լուսաբանութեամբ։

Կանգնելով այդ հողի վրա, որ միայն կարող է լինել գիտական, հիմնաւոր, դուք չը պիտի զարմանայիք, որ գրականութիւնը մի ժամանակ մեծ ուշադրութիւն էր դարձնում գիւղից դէպի քաղաքները սկսված հոսանքի վրա։ Դա կեանքի երևոյթ էր և անմիջապէս արտայայտվեց գրականութեան մէջ։ Կար այն ժամանակ հայ պրօլետարիատ։ Մենք յիշում ենք, եօթը թէ ութ տարի առաջ Բեռլինի հայ ուսանողները սկսեցին հրատարակել «Սօցիալիստ» անունով մի թերթ։ Կարծէք նրա առաջին համարը միայն լոյս տեսաւ։ Եւ ինչ։ Սօցիալիզմ չէ կարող լինել առանց բանւորական դասակարգի։ Մեր ուսանողները որոնել էին մի երկրում բանւորական դասակարգ և գտել էին… Թիֆլիսի Թուլուխչիներին։ Դրանց էր ուղղել իր խօսքը նորածին սօցիալիստական թերթը, մոռանալով, որ վաղուց է անհետացել Թուլուխչիների դասակարգը, որ իր ժամանակին իսկի հայերից էլ չէ եղել բաղկացած, այլ մեծ մասամբ Թուրքերից…

Գիւղացին ժամանակաւորապէս, տարվայ մի յայտնի մասը գնում էր Բագու՝ աշխատելու համար։ Եւ այդպէս էլ նրան նկարագրում էր գրականութիւնը։ Դա իսկական բանւոր էլ չէր, այլ կէս-գիւղացի սեփականատէր, կէս-բանւոր։ Շատ է այժմ իսկական հայ պրօլետարիատ մեր։ Նոյն իսկ Ռուսաստանը, չը նայած որ վաղուց անցել է արդիւնաբերութեան կապիտալիստական կարգին, դեռ այժմ էլ, ինչպէս խոստովանում են սօցիալ-դեմօկրատական թերթերը, չունի այնպիսի ջախջախիչ թւով պրօլետարիատ, որ կարողանայ ներկայ յեղափոխութիւնից միանգամայն խլել բուրժուազիական կերպարանքը և դարձնել նրան սօցիալիստական, ուստի սօցիալ-դեմօկրատական ստիպված է առժամանակ դաշնակցութիւն տանել գիւղացիական ագրարական շարժման հետ, առաջնորդվելով տակտիկայի պահանջներով։ Դեռ ժամանակը չէ, ասում են այդ օրգանները, դեռ կապիտալիզմը այն աստիճան չէ զարգացած, որ կարելի լինի բուրժուազիայի ձեռքից խլել յեղափոխութեան պտուղները։

Մեր Կովկասը այդ կողմից աւելի եւս Թոյլ է զարգացած և յետամնաց։ Այս դեռ այժմ։ Իսկ մի քանի տարիներ առաջ՞

Այո, հանգամանքները, պայմանները աւելի նեղ էին, [illegible] վճիռներ կայացնող մեր սօցիալ-դեմօկրատիայի համար։ Այս պատճառով է, որ նա մեծ ապլոմբով բացականչում է. ցոյց արէք վերջին տարիների մեր գրականութիւնը, քրքրեցէք մեր ամսագրերը ու լրագրերը և երդվում եմ, այնտեղ դուք երկու տող էլ չէք գտնի սօցիալիզմի և բանւորական հարցի մասին։

Նախ և առաջ, դա սուտ երդում է։ Երկու տող չէ, երկու տասնեակ տողեր էլ կարելի է գտնել բանւորների և նրանց հարցի մասին։ Բայց գլխաւորը այդ չէ։ Սուտ երդում ուտել կարող են չափազանց անպատասխանատու մարդիկ, որոնց համար ուսումնասիրելը, փաստերով խօսելը պարտաւորական չէ։

Գլխաւորը այդ չէ, կրկնում ենք։ Հայ մամուլը վերջին տարիներում կարող էր նոյն իսկ ծպտուն հանել բանւորների մասին։ Մենք հարկադրված էինք եզոպոսեան լեզուով խօսել նոյն իսկ սովորական բաների մասին, էլ ուր թողած բանւորութեան մասին, որի հարցը Գօլիցինի սուրիններով էր ճնշվում։ Գոնէ մի քանի փաստեր, մի քանի խորհրդածութիւններ հաղորդելու համար մենք ստիպված էինք լինում «բանւոր» բառի տեղ գործ ածել «աշխատաւոր» կամ աւելի յաճախ «գործաւոր» բառերը։ Եւ դարձեալ չէինք կարողանում ազատել յօդուածները կարմիր թանաքից։ Թէ որքան նիւթեր են զոհ դարձել այդ թանաքին, ո՞վ կարող է հաշւել։ Մեզ Թոյլ չէին տալիս նոյն իսկ կօօպերատիւ կազմակերպութիւնների մասին ազատ գրել։ Մի անգամ ջնջեցին մի յօդուած ամերիկական բանւորների մասին. սա փաստ է, որը բացատրելու համար պատրաստ էր այն պատճառաբանութիւնը թէ «Մշակը» կարդացվում է և Բալախանիում, հետեւաբար [illegible] ինչ է կատարվում աշխարհի մէջ։ Մի անգամ մեր յօդուածներից մէկում խօսք էինք ածել «մարքսիստներին». և պօլիցէյական պաշտօնատար մի հայ թերթ ասաց, որ մենք մատնութիւն ենք անում, քանի որ մարքսիստ նշանակում է պետական յանցաւոր։

Փաստեր դեռ շատ ու շատ կարող էինք բերել։ Բայց աւելորդ է։ Մենք, հայ գրողներս, նախանձում էինք վրացիներին. նրանց մամուլը համեմատաբար տանելի դրութեան մէջ էր։ Գօլիցինի ժամանակին ամենավատթար հալածանքներին հայութիւնն էր ենթարկված. և հայ լրագիրը բացառութիւն չէր կարող կազմել։ «Մշակը» միայն ցենզուրական կոմիտէտի հսկողութեան չէր ենթարկված, նրա վրա հսկում էր և կառավարչապետի դիւանատունը։ Եթէ մի օր սկսենք պատմել թէ «Մշակը» քանի քանի անգամ է խուսափել խափանվելու վտանգից, թէ ինչու նրան դադարեցրին երկու ամսով, ընթերցողը կը մնայ ապշած։

Այդ դրութեան մէջ պիտի զբաղվէինք սօցիալիզմով և բանւորական հարցով։

Հայոց մամուլը չէր զբաղվում, որովհետև անկարելի էր զբաղվել այն սոսկալի ճնշումների տակ։ Եթէ ռուս ուրիշ ազգութիւնների լրագիրները մի քիչ, մի աննշան առաւելութիւն ունէին այդ բանի մէջ, մենք այդ առաւելութիւնից էլ զրկված էինք իբրև հայ, որին հալածելը, որին խեղդելը «աստուածահաճոյ» մի գործ էր բիւրօկրատիայի համար…

Յօդուածագիրը միթէ չը գիտէ, որ դրութիւնը այսպէս էր։ Անկարելի է, որ չիմանայ։ Ուրեմն հայ մամուլի վրա բարդած մեղադրանքը մենք համարում ենք ուղղակի անբարեխղճութիւն։

Բացարձակ անբարեխղճութիւն է և այն, որ յօդուածագիրը կուրծք ծեծելով հաւատացնում է թէ հայ գրականութիւնը և մամուլը աշխատել են և աշխատում են խեղդել բանւորական շարժումը։ Մենք մեր արժանաւորութիւնից ստոր ենք համարում այդպիսի մի անվայել ինսինուացիային պատասխանելը…

(Կը շարունակվի)

ԲԱԹՈՒՄԻ ԴԷՊՔԵՐԸ

Երկուշաբթի, 28-ին նոյեմբերի

Երեկոյեան ժամի մօտ 5-ն է. արդէն բաւական բազմութիւն է ժողովվել քաղաքային տան մէջ և մի կողմից էլ գալիս են։ Ցանկարծ մի ինչ որ իրարանցում է սկսվում ժողովրդի մէջ. «քաղաքում կոտորած տեղի ունի» շշուկը վայրկենապէս մագնիսացրեց ամենքին։ Հարցեր է, որ տալիս են իրար. ինչպէս, որտեղ և այլն։ Գլխաւորներից մի քանիսը յանկարծ դուրս են գալիս և վաղեվաղ վար իջնում, առանց մի խօսք ասելու [illegible]։ «Հեռախօսով քաղաքային հիւանդանոցից յայտնեցին, որ սպանված և վիրաւորված մարդիկ են բերում այնտեղ քաղաքի զանազան կողմերից։ Գնացէք տեսնելու այդ ինչ բան է»,—ասում է մէկը և նոյնպէս արագ ցած իջնում աստիճաններից։ Վերջապէս մի քանի րօպէից յետոյ ամեն ինչ պարզվում է։ Ահա եղելութիւնը։

Կիրակի օր, ամսիս 27-ին, կազակներից մէկը հրացանը ուսին դրած և միամիտ գնալու ժամանակ յանկարծ մէկը մօտենում է նրան, հրացանը խլում և վայրկենապէս անհետանում։ Նոյնանման մի դէպք տեղի է ունենում նաև այդ օրը, բայց այս անգամ կազակները երկու հոգի են լինում և աշխատում են նրանց հրացանը փախցնողին բռնել, բայց հրացանին արդէն փախչելու ժամանակ նա տուած է լինում մի ուրիշին, որը և փախչում, անյայտանում է հրացանը։ Կազակները այդ բռնված մարդուն բերում են իրանց զօրանոցը, ինչ են անում նրան—յայտնի չէ, միայն այս անգամ փոխանակ երկուսի, 30—40 հոգով են գնում դէպի այն կողմը, որտեղ խլել էին հրացանը։ Նրանք այնտեղ հասնելուն պէս, բռնում են նաև մի քանի ուրիշներին, որոնք հրացանը խլելու ժամանակ ականատես էին և օգնութեան չը հասան նրանց։ Բացի բռնելուց, նրանք սկսում են առանց ձայն հանելու, այսինքն հրաշէն գործադրելու, սրերը պատահողի փորը խրել գլխաւորապէս վրացիների, որովհետև, եթէ Թոյլ կը տրվի մեզ ասելու, հրացան խլողները վրացիք են եղել։ Թէև իսկոյն նկատելի է լինում նրանց վարմունքը և ժողովուրդը սկսում է փակել խանութները և փախչել, բայց և այնպէս, մինչև իրանց տեղերը վերադառնալը սպանում են 9 հոգու և 4-ին էլ ծանր կերպով վիրաւորում, որոնցից 3-ին մահացու։ Այս թիւը ես գրում եմ զօրանոցը տարած և այնտեղ սպանվածների հետ միասին, բայց թէ քանիսին են տարել և քանիսին սպանել, առ այժմ դեռ հաստատապէս պարզված չէ։

Վերջապէս, ընդհանուր շփոթութիւնից յետոյ կազմվում է միտինգը քաղաքային տան մէջ, որին միակ զբաղեցնող խնդիրը օրվայ դէպքն է։ Բորբոքված ամբոխը, ինչպէս ասում են, քիչ է մնում իրար ուտէ։ Մի քանի յուզիչ ճառերից յետոյ, որոշվեց մի պատգամաւորութիւն ուղարկել նահանգապետի մօտ և պահանջել, որ անմիջապէս հեռացնի Բաթումից և նրա շրջանից յիշեալ կազակների ամբողջ կազմը։ Պատգամաւորութիւնը յետ է գալիս, ասելով, որ նահանգապետը յայտնել է, որ կազակները իր իշխանութեան տակ չեն, այլ կօմենդանտի։ Ժողովը նոյն պատգամաւորութիւնը նոյն [illegible] ուղարկում է կօմենդանտի մօտ, որից նոյն պատասխանն է ստացվում։ Նա ասում է, որ կազակները Բաթում են ուղարկված Փոխարքայի կողմից և երեք օր ժամանակ է ուզում միջնորդելու Փոխարքայի մօտ, որպէս զի հեռացվեն կազակները, աւելացնելով, որ ինքը ամեն կերպ կաշխատէ կատարելու ժողովի պահանջը։ Այդ պատասխանները, ի հարկէ, ոչ մի բաւարարութիւն չը պատճառելով բորբոքված ամբոխին, դրութիւնը գնալով սկսեց սուր կերպարանք առնել։

Ճիշտ այդ միջոցներին լուր բերին, որ կազակները տարել են մօտ 10—12 մարդու իրանց զօրանոցը, մերկացրել են նրանց, ծեծում, տանջում և կոտորում են ու ածում իրանց մօտի «Նուրիէ-գօլ» կոչված լիճը։ Այդ լուրը բոլորովին կատաղեցրեց ժողովրդին. ճառախօսներից մէկը բոլորովին աւելորդ համարելով այդ ձևականութիւնները, այսինքն [illegible]կում էր իսկոյն և եթ յարձակվել կազակների կազմի վրա և բռնութեամբ դուրս վանել նրանց Բաթումից։ Ուրիշները չափազանց յանդուգն համարելով այդ քայլը և վտանգաւոր, աւելի նպատակայարմար էին համարում առաջինը, այսինքն խիստ կերպով պահանջել կառավարութիւնից, որ նրանց հեռացնեն Բաթումից։ Սկսվեց տաք վիճաբանութիւն, որը տեւեց մինչև գիշերվայ ժամը մօտ 12-ը։ Այդ բոլորի հետեւանքը մօտաւորապէս այն եղաւ, որ վճռվեց բացի հացից, միւս բոլոր մթերքների խիստ գործադուլ անել, իսկ միւս հարցերը, այսինքն յարձակվել կազակների վրա, թէ սպասել կօմենդանտի կարգադրութեան—մնացին անորոշ։ Վերջապէս գրեթէ ծայրայեղութեան հասած տաք վիճաբանութիւնների ազդեցութիւնից բորբոքված ժողովուրդը սկսեց ցրվել, առանց հասկանալու, թէ ինչ է լինելու այդ բոլորի վախճանը…

—

29-ին նոյեմբերի

Առաւօտեան յայտարարվեց, որ իբր թէ որոշված էր գալ քաղաքային հիւանդանոցը և այնտեղից սպանվածներին բերել ու նահանգապետի տան առաջ փռել՝ նրանից խիստ հաշիւ պահանջելու այդ բոլորի համար։ Սակայն խիստ անձրևը արգելք հանդիսացաւ այդ որոշումը կատարելու։ Ապա տեղի ունեցաւ բոլոր կազմակերպութիւնների ներկայացուցիչների ընդհանուր ժողով՝ զինելու ժողովրդին և պատրաստ պահելու, որ եթէ յընթացս 3 օրվայ կառավարութիւնը կազակներին չը հեռացնէ, իրանք յարձակվեն նրանց (մօտ 300 հոգի) վրա և դուրս քշեն Բաթումից։ Մի քանի ժամ չանցած, փողոցները արդէն լիքն էին զինված խմբերով։ Նրանք ուղեկցում էին ժողովրդին դէպի հիւանդանոցը գնալու ժամանակ՝ հիւանդներին տեսնելու համար և այնտեղից էլ յետ էին բերում դէպի քաղաք։ Հիւանդանոցում ճառախօսութիւններ են տեղի ունենում օրվայ հարցի առիթով։ Այսպէս թէ այնպէս, ժողովուրդը սաստիկ մագնիսացած է և խիստ անձրևն է միակ պատճառը, որ արգելք է հանդիսանում ուժգին ցոյցեր գործելու։

—

30-ին նոյեմբերի

Ամբողջ քաղաքը ժողովրդի ձեռքին է։ Ոչ մի տեղ զինված զօրք չէ երևում. բոլոր ազգերի (նաև աջարացիների) կազմակերպութիւնների զինված խմբերն են միայն, որ արագ շարժումով դիմում են այս ու այն կողմը՝ դիրքեր բռնելու, որովհետև ձայն էր տարածվել, թէ կազակները ուզում են փախչել։ Ժամը մօտ 10-ը կը լինէր, ինչ սկսեցին փողոցներում բարրիկադներ կառուցանել և քաղաքի բոլոր անցքերը խզել, որ կազակները չը կարողանան փախչել։ Բարրիկադների համար քաղաքի մի քանի մասերում կտրտեցին նաև հեռագրական սիւները և թելերով էլ ահագին ցանցեր առաջեցին։ Վերջապէս մի չը տեսնված պատկեր է ներկայացնում քաղաքը։ Ամենքն էլ շարժողութեան մէջ են՝ և մարդիկ և կանայք և փոքրահասակները. վերջինները մրջիւնի պէս քարեր և փայտեր էին կրում բակերից բարրիկադներ կառուցանելու ժամանակ։ Ժողովրդական կարմիր խաչի խմբերը վազվզում են այս ու այն կողմերը։

Այդ միջոցին «Բուռն Թարիէ» ամրութիւնից երկու թնդանօթ են արձակում. նրան պատասխանում են միւս ամրութիւններից. վատ լուր գուժող ազդանշան է դա, բայց և այնպէս, ոչ մի կողմից զօրք չէ երևում։ Ժամը մօտ 11-ն է. յանկարծ այն կողմից, ուր բնակւում են կազակները և ուրիշ հետևակ զօրքեր, հրացանների զալպի ձայն է լսւում. Նոյն ձևով պատասխանում են և այս կողմից, այսինքն կազմակերպութիւնների խմբերը և մի քանի բօպէ քաղաքը որոտում է հրացանների ձայնից։ Ոչ ոք չը գիտէ, թէ ի՞նչ բան էր այդ։ Հրացանաձգութիւնը դադարում է. Կարմիր Խաչի խմբերը վազվզում են դէս ու դէն, բայց առ այժմ ոչինչ չը կայ։ Քիչ յետոյ նորից սկսվում է հրացանաձգութիւն, միայն կենտ-կենտ։ Դիրքերից խմբերը գոռում են, որ զսպեն այդ անտեղի արձակող յիմարներին, բայց յանկարծ պարզվում է, որ արձակողները ոչ թէ ժողովրդից են, այլ «Բուռն Թարիէ» ամրութիւնից զօրքերը հրացաններով վար են իջել, բռնել քաղաքի փողոցների ծայրերը և այդտեղ թաքնված տեղերից (երկաթուղու վագօնների տակ) արձակում են ժողովրդի վրա փողոցի երկարութեամբ։ Որքան լսեցինք, այդպիսով նրանք սպանել էին երկուսին և վիրաւորել 7-ին։ Զրգռված ամբոխից մէկը մօտենում է նրանց և մի ռումբ նետում նրանց մէջ, որ և, ինչպէս լսեցինք, 4 զինուոր է ծանր կերպով վիրաւորվում և 1 օֆիցէր։ Վերջապէս դադարում է հրացանաձգութիւնը, բայց և այնպէս ամրութիւններից (տանիքներից, սարդափներից և այլն) խմբերը խիստ կերպով հսկում են և զանազան կարգադրութիւններ անում այս ու այն տեղի վերաբերմամբ։ Չէր կարելի չը հիանալ, տեսնելով այդ ընդհանուր համերաշխութիւնը, ի հարկէ, առանց մտնելու ընդհանուր տակտիկայի քննութեան։

Ժամի մօտ 12-ն է. չը նայելով, որ երկաթուղում էլ ընդհանուր գործադուլ է արված, բայց և այնպէս, յանկարծ, կարմիր դրօշակներով զարդարված մի գնացք է գալիս—շոգեմեքենան և երկու վագօն, որը և իսկոյն յետ դարձաւ։ Ինչպէս լսեցինք, այդ գնացքով Սամտրեդիից մի պատգամաւորութիւն էր եկել և յայտնել տեղական կազմակերպութիւններին, որ այնտեղ արդէն մօտ 2500 լաւ զինված մարդիկ ունեն պատրաստ, որոնք հարկաւոր դէպքում կարող են իսկոյն փոխադրել Բաթում։ Նոյնպիսի մի լուր էլ տարածվում է նաև Աճարայի թուրքերի կողմից, թէև քիչ թւով։ Գրեթէ ամբողջ օրը քաղաքային տան մէջ ժողով կայ, որին չը խանգարելու համար չորս կողմից պատած են հարիւրաւոր զինված մարդիկ։ Ժողովի որոշումները մեծ մասամբ հակված են առաջին կարծիքին, այսինքն սպասել մինչև 3 օր համաձայն կօմենդանտի առաջարկութեան։ Դրանից յետոյ, երեկոյեան դէմ, ձայն տարածվեց, որ իբր թէ նահանգապետը և կօմենդանտը յայտնել են քաղաքային վարչութեան միջոցով ժողովրդին, որ խաղաղվեն, բարրիկադները վերցնեն և նրանց պահանջը, ինչպէս որ խոստացել են, 3 օրվայ մէջ կատարված կը լինի։ Երեկոյեան դէմ է. ժողովուրդը փոքր առ փոքր քաշվում է դէպի տները և բարրիկադներն էլ տեղ-տեղ վերցնվում են։

Դեկտեմբերի 1-ին

Առաւօտեան ժամը 9-ն է։ Ամբողջ քաղաքը փակ է. փողոցներում էլ այլևս զինված մարդիկ չեն երևում, ասված է, որ դուրս չը գան։ Մի քիչ յետոյ յանկարծ լսում ենք, որ քաղաքի «պատուաւոր մասի» կողմից մի քանի պուլեմետներ են շարել՝ բերանները դէպի քաղաքական հասարակ թաղերի կողմը ուղղած։ Դրա հետ միասին լսում ենք և այն, թէ զօրքերը և կազակները միացած մի քանի տեղերում խուզարկութիւններ են կատարում՝ մանաւանդ այն կողմերում, որտեղից երէկ ռումբ էին նետել դէպի զօրքը։ Լուր տարածվեց նոյնպէս, որ կազակները փողոցով անցնելու ժամանակ խուզարկել են մի արտվինցի հայ տղայի, խլել նրանից մօտը եղած ատրճանակը և իր ատրճանակով սպանել նրան։ Ընդհանրապէս փողոցներով անցնելը բաւական վտանգաւոր է, գլխաւորապէս նրա համար, որ կօմենդանտը վիրաւորվելով նրանից, որ ժողովուրդը առանց սպասելու տուած ժամանակի (3 օր) լրանալուն սկսել է բարրիկադներ սարքել և զինված դիրքեր բռնել՝ կռւի համար, այդ պատճառով էլ նա իր կողմից է պատերազմական (осадное положеніе) դրութիւն հրատարակել՝ իրան յանձնված սահմաններում։

Այդ նոյն հրամանի տակ, որ անձամբ կարդացինք, կօմենդանտը դիմում է տեղիս բոլոր ազգաբնակութեան առողջամիտ մասին և խնդրում, որ աջակցեն իրան՝ որքան կարելի է շուտով վերականգնել խաղաղութիւնը և միջոց տալ իրան՝ վերացնելու պատերազմական դրութիւնը, որը, որպէս ժողովրդին ճնշող մի դրութիւն, ամենևին ցանկալի չէ իրան նրա երկարատևութիւնը։ Ինչպէս լսեցինք, նոյնանման դիմում նա արել է նաև տեղիս կազմակերպութիւններին, որոնց վերագրում են այսօր ընդհանուր գործադուլի վերացումը։ Չը նայելով այդ բոլորին, բայց և այնպէս շարունակ լուրեր ենք լսում, որ զօրքերը և կազակները թէ ցերեկը և թէ գիշերները խուզարկութեան պատրուակով ներս են խուժում զանազան տեղեր, կողոպտում, կոտրատում և շատ տեղերում սպանում, դուրս գալիս։ Չը մոռանամ ասելու, որ կազակները յարմար առիթ գտնելով, 3 անգամ ներս են խուժել „Чер. Вѣст.“-ի խմբագրատուն և ջարդ ու փշուր արել ամբողջ իրերը և պատառոտել թղթերը։ Վերջապէս, այս ամսիս 4-ն է, ինչ դրութիւնը նոյնութեամբ շարունակվում է և յայտնի չէ, թէ ե՞րբ վերջ կը տրվի այս խայտառակ դրութեան։

Ընդհանրապէս վտանգաւոր վիճակ է սպառնում քաղաքին։

Գ. Գրիգորեանց

ՆՈՐԱԳՈՅՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ

(Դիմակաւոր և ծածկամիտ մարդկանց պատկերներ)

II

Մի կողմից Ռուսաստանի ժողովրդի ազատագրական շարժման ծովածուփ ալիքները, միւս կողմից դիւական և անհոգի քաղաքականութեան ձեռքով սարքած աշխարհակործան ջարդերը, շահատակութիւնները և կոտորածները թէ Ռուսաստանի մէջ և թէ Կովկասում ընդհանրապէս, իսկ կենսունակ ազգերի (լեհացիների, ֆինլանդացիների, հրէաների և հայերի) դէմ մասնաւորապէս՝ երևան հանեցին մեր առջև մարդկութեան և եղբայրութեան բարեկամների և նրանց հակառակների ճիւաղների զանազան դէմքեր, որոնց դիմակները կամաց-կամաց պատռվելով՝ խրատական դասեր են թողնում ազգերի պատմութեան համար և առանձնապէս մեզ՝ հայերիս համար։

Հէնց որ մարդասպան քաղաքականութիւնը Կովկասի քաղաքների մէջ սարքած կոտորածները հասցրեց Թիֆլիսին մօտիկ Գանձակ քաղաքը—քաղաքային ինքնավարութեան կողմից երեք իրաւասու ուղարկվեցին կոտորածի վայրը՝ խաղաղարարական առաքելութեան դրօշակով այն է՝ պ.պ. Ալ. Խատիսեան, Գ. Ն. Գեօկչաեվ և Ս. Փ. Չրելաեվ։ Այդ պարոնները իրանց առաքելութիւնը (միսսիան) կատարելուց յետոյ՝ վերադարձան Թիֆլիս և մեր հասարակութիւնը սպասում էր լսել նրանցից հրապարակական մի անկողմնապահ և ճշգրիտ տեղեկագիր Գանձակի անցքերի և նրանց պատճառների վերաբերմամբ։ Համարեա բոլոր կուսակցութիւնների միտինգներում (մանաւանդ մանկավարժների և սօցիալ-դեմօկրատների) ահագին աղմուկ և խռովութիւն էր տիրում այդ կոտորածի սարքողների դէմ, միաձայն նախատական և անէծքի աղաղակներ էին ուղղվում Գանձակի գեներալ-նահանգապետ Տակայշվիլիի հասցէին և իրանց վճիռներում յայտնելով իրանց խորին, հոգու խորքից բղխած զզւանքը և նողկանքը—պահանջում էին իշխանութեան միջոցով անմիջապէս այդ տխրահռչակ գեներալին և նրա արբանեակներին դուրս վռնդել պաշտօններից։

Իսկ քաղաքի կողմից յատուկ պատուիրակները ի՞նչ խաբարներ բերին արդեօք մունիցիպալիտետի և բնակիչների համար։ Դրանցից պ. Ալ. Խատիսեանը, որի հաւաքած տեղեկութիւնները և կարծիքները աւելի մեծ յաւակնութիւն ունեն հասարակութեան համարեա ամեն խաւերի համար՝ շնորհիւ իր վաստակած դիրքի և արժանապատուութեանը, մի կարճ նամակով («Нов. Обоз.» № 44-ում) Գանձակի կոտորածի պատճառը իր խորին համոզմունքով և հարկաւոր դէպքերում՝ վկայութիւններով—համարելով տեղական իշխանութիւնը՝ խոստանում էր մանրամասն յօդուածներով ծանօթացնել ընթերցողներին կոտորածի մանրամասնութիւնների և հանգամանքների հետ։ Բայց մինչև խոստացած նկարագրութիւնը կը կարդայինք, նրա հետ գնացած մի ուրիշ անդամ, պ. Ս. Փ. Չրելաեվը, որը մի և նոյն ժամանակ քաղաքային խորհրդի քարտուղար լինելով իրացրել է արձանագրութիւններ կազմելով մի առանձին «Փասսի ոը-պատիւ», շտապել է առաջընթաց լինել և լարախաղացին յատուկ ճարպկութեամբ իր երկար նախամտածած բառերի ևլէջներում աշխատում է ջրից և կրակից անթաց դուրս բերել Գանձակի գեներալ-նահանգապետ Տակայշվիլուն... Այդ նկարագրութեան ամենավերջնականացուցիչ կողմը նրանումն է կայանում, որ Տակայշվիլուն անմեղ դուրս բերելու, որպէս միակ զօրեղ ապացոյց (արգումենտ), պ. Չրելաեվը բերում է իր խօսակցութիւնը իր ընկերների՝ պ.պ. Խատիսեանի և Գեօկչաևի հետ, որոնցից վերջինը իբր մենակ մնացած ժամանակ հարցրել է թէ «արդեօք կարող ենք մենք՝ խղճմտանքով դատելով՝ հաստատել գեներալ-նահանգապետ Տակայշվիլու դէմ բարդած մեղադրանքները անգործունէութեան, պրովօկացիայի և զեղծման մէջ», և որ իբր երեքն էլ վճռել են միաձայն, որ այդ մեղադրանքները, առնուազն, տարակուսանքի ալտեղ են և որ այդ գործում կայ մի ինտրիգա իսկական պրովօկատորների կողմից։

Եթէ ինքը, պ. Չրելաեվը, միայն իր սեփական կարծիքը յայտնէր, էլի կարելի էր, թէկուզ կարծիքի ազատութեան տեսակէտից առանց առանձին վրդովմունքի, անտես անել այդ՝ իմանալով գրողի միտումները. բայց այստեղ զզւելին այն է դուրս գալիս, որ իր միակ արդարացուցիչ փաստը յօդուած և ի պաշտպանութիւն Տակայշվիլու նա գտնում է ուրիշների ասածները խարդախելու մէջ։[1] Որպէս ապացոյց մեր ասածների, կարող է ծառայել Ալ. Խատիսեանի և Գեօկչաևի պատասխանը ընդդէմ այս սուտ գրուածքի, որը տպված է «Нов. Обозр.» № 250-ի մէջ և որի մէջ Գանձակի անցքերը քննող այդ երկու պատուիրակները յայտնում են, որ իրանց հաւաքած փաստերի հիման վրա երեքն էլ Տակայշվիլու անգործունէութիւնը վկայելով—դատել են նրան վերին աստիճանի աններողամիտ մարդ, իսկ պրովօկատորութեան կողմից իրանք վճռական բան չեն ասել, քանի որ իրանց ձեռքով հաւաքած փաստերը վերջնական եզրակացութեան համար բաւարար են, իսկ նրա անգործունէութիւնը և չեզոք վարմունքը միաձայն վկայել են իրանք և բացի այդ, պ. Չրելաեվի մօտ նոյնպէս վկայել են քաղաքի պահապան զօրքերի (գարնիզոնի) սպաները, որոնց հանդիպել են իրանք։ Ահա թէ ինչպէս է գրվում պատմութիւնը։

Ակամայ յիշում է մարդ իմաստուն առակախօսի հետևեալ պատմութիւնը՝ «ագռաւը տեսաւ, որ աղաւնիները լաւ են կերակրվում, ուզեց ինքն էլ աղաւնի ձևանալ, սպիտակ փոշի ցանեց վրան և մտաւ աղաւնետուն։ Աղաւնիները կարծեցին թէ սա էլ իրանցից է, ներս ընդունեցին. բայց ագռաւը մոռացմամբ կռաւեց իր ձևով։ Աղաւնիները կացահարեցին և դուրս խրկեցին. ագռաւը վերադարձաւ իր ընկերների մօտ, բայց սրանք էլ չընդունեցին նրան, որովհետև գունափոխվել էր»։ Պ.պ. Խատիսեանը և Գեօկչաևը կարդալով իրանց մտերմութիւնը, ընկերութիւնը և հաւատարմութիւնը ի չարը գործ դնող և շահագործող պ. Չրելաևի յիշեալ փաստերի կեղծումը—երևի յիշեալ առակախօսի գունափոխված ագռաւի կռաւոցը մէջ բերելով, նոր հասկացան իրանց սխալը... Այս կողմից մասամբ ինքը պ. Ալ. Խատիսեանը ևս մեղաւոր է, որը այնքան ուշացրեց իր տեղեկագրի հրատարակելը, մինչև որ ագռաւի կռաւոցը արթնացրեց նրան իր ընկերոջ հետ։ Մեր հայերի սխալը մեր գրացիների անկեղծութեան վերաբերութեամբ ոչ միայն նոր բան չէ, այլ դատապարտելի է մեզ համար այն տեսակէտից, որ անցեալի դասերը չեն դարձել մեզ համար խրատական և նախազգուշացուցիչ և մենք՝ այս աշխարհային դիմակահանդէսում շարունակում ենք խաբվել և տուժել մեր պարզամտութեան և հաւատ ընծայութեան համար մեր շրջապատող ամենատեսակ «ղըլըղ» պոլիտիկաններից, երկդիմի, ծածկամիտ և նենգամիտ բարեկամ-հարևաններից։

Այլ առակ լուսաւոր։

Թիֆլիսի Թուրք-հայկական խառնակութիւնը, որ սկսվեց, հասկանալի է, այս և այն տեղ զանազան ձևի ընդհարումներ տեղի ունեցան հայերի և թուրքերի մէջ, երկու կողմից էլ վիրաւորվածներ և սպանվածներ կային. ահա, պղտոր ջրումը ձուկ բռնողներից «մի խումբ վրացիք» ուղղում են տեղիս «Возрожд.» լրագրին (№ 38) մի նամակ՝ յանուն կօմիտէների անդամների՝ պահանջելով նրանից բազմակողմանի և օբեկտիվ կերպով պարզել հայ-թուրքական կոտորածների պատճառները, «Դաշնակցութեան» գործունէութիւնը և կերպարանքը և նոյնպէս թէ՝ այդ կոտորածներին, բացի հայերից, ուրիշ ազգութիւններ ևս մասնակցել են թէ ոչ։ Տեղական կուսակցութիւններից սօցիալ-բանւորական դասակարգը, որ այնքան մեծ և ազնիւ գաղափարների արտայայտիչ է եղել և լաւագոյն ձգտումներ քարոզող և կատարողը—միանգամայն անակընկալ «Воз.» լրագրի խմբագրի և յիշեալ անանուն վրացի խմբագրի համար, հետևեալ արժանաւոր և խորիմաստ պատասխանն է տուել յիշեալ լրագրում (№ 40). «Սօցիալ-Բանւորական Կուսակցութեան Թիֆլիսի Կօմիտէտը կարելի չէ համարում պատասխանել ամեն տեսակ անանուն, տենդենցիօզ և պրօվօկատորական յայտնութիւններին և զարմանում է, որ տեղական մի քանի լրագիրների էջերում կարող են տպագրվել առանց նկատողութիւնների այդպիսի աչքառու պրօվօկացիա կրող նամակներ»։ Եւ միայն այդ «շոգու բաղնիքից» յետոյ «Возр.» թերթի խմբագրութիւնը տպագրելով այդ պատասխանը՝ աւելացնում է իր կողմից, որ յիշեալ երկու կողմի նամակների առիթով իր կարծիքը պիտի յայտնէ։ Ա՛յն, ինչ որ հայերս մեր անցեալ փորձերից չը կարողացանք օգտվել և որպէս դաս՝ աչքի առաջ ունենալ մեր շրջապատող երկդիմի և ծածկամիտ բարեկամների վերաբերութեամբ՝ այն տալիս է մեզ այժմ ժամանակը և նրա նորագոյն երևոյթները՝ ի դէմս արթնացած անզիջողական ժողովրդի, ի դէմս նրա փառաւոր և զօրեղ կազմակերպութիւնների (օրգանիզացիաների) և կուսակցութիւնների, որոնց ահեղ ձայնի առաջ խլանում են ամեն տեսակ խուլիգանութիւն և պրօվօկացիա, ամեն տեսակ նենգամիտ դաւադրութիւն՝ մեր վերաբերութեամբ։ Հետևեալ յօդուածում աւելի կը պարզենք մենք այդ դրութիւնը։

Բիխսօ

ԴԺՈԽԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ուշադրութեամբ հետևելով վերջին տասն ամիսների ընթացքում՝ Կովկասում տեղի ունեցող հայկական ջարդերի ընթացքին՝ սկսած Բագուից մինչև Նախիջևան և վերջինի գիւղերը, ականերև դարձան երեք շրջաններ, յարձակման երեք միմեանց յաջորդող ձևեր ծրագրված շատ ճարպիկ կերպով։

Կովկասի բռնակալ մթնոլորտում կենդանութեան նշաններ ցոյց տուող և Գոլիցինների—այդ «երէց Սատրապների»—քունը խանգարող հայ ժողովրդին բնաջինջ անելու ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ էին երկու տարր՝ հրամանատարներ և զօրք. բարեբեր Կովկասը յետ չմնաց նաև արդիւնաբերական այդ ճիւղերում։ Գոլիցինի շկօլան տուեց հանճարեղ հրամանատարներ՝ տխրահռչակ Նակաշիձէ, գեներալ Տակայշվիլի և նմանները—իսկ թուրք տարրը հանդէս եկաւ իր սև հարիւրեակներով, որպէս գործող զօրք իրան դնելով հանճարեղ հրամանատարների տրամադրութեան տակ։

Ջարդերի տեխնիկական մասը այսպէս կազմակերպելով, այնքան չը պիտի զարմանանք աւերումների շուտափոյթ կերպով կատարվելու նկատմամբ, որքան ծրագրի, մի ծրագիր, որի մէջ գազանային զգացմունքներն անգամ բացակայում էին։

Զինվել, նախամտածել և կազմ ու պատրաստ, մի անգամից անսպասելի կերպով յարձակվել շուկաներում, խանութներում և փողոցներում հայերի վրա, փողակահարել, սրախողխող անել, կոտորել նոյն իսկ կանանց ու երեխաներին և սարսափի բերել կենդանի մնացածներին։ Ահա հայկական ջարդերի ծրագրի հիմնական կէտը, առաջնորդող գաղափարը։ Սակայն ջարդերին կից զուգնթացաբար մենք տեսնում ենք նաև կողոպուտ և թալան։ Հային պէտք է աղքատացնել, նրա ձեռքից խլել նրա մի կտոր հացը և նրան սովամահ անել։ Բացի այս, թուրք տարրը իր սև հարիւրեակներով և հազարեակներով եկել է օգնութեան՝ կազմելով մի մեծ բանակ. նրան հարկաւոր էր վարձատրութիւն, երախտագիտութիւն՝ ցոյց տուած քաջագործութիւնների համար, վերջապէս անհրաժեշտ էր նրան հրապուրել կողոպուտի անունով. ահա այս երկու նպատակների տեսակէտից միանգամայն յարմար էր հայի գոյքի կողոպտումը թուրքերի—սև բանակի—ձեռքով։

Միամտութիւն կը լինէր հաւատալ, որ զօրքը հնարաւորութիւն չունէր կանգնեցնել կողոպուտը, որի աչքի առաջ, Գանձակում, թուրք խուժանը բեռնում էր սայլերը և քշում հեռանում։

Ահա ծրագրի երկրորդ կէտը։

Սակայն մենք տեսնում ենք ծրագրի և աւելի մի երրորդ տեսակը, որը աւելի սոսկալի, աւելի ահաւոր է քան առաջին երկուսը միասին։

Սպանվում են մարդիկ տասնեակներով, հարիւրներով—հազարաւոր ժողովրդից, կողոպտվում են խանութներ, տներ, այս բոլորը, որքան էլ սոսկալի, բայց և այնպէս, այն աստիճան սարսափելի չեն, ինչպէս մի շէն թաղը, մի ամբողջ գիւղը հրդեհի զոհ է գնում, մի ժամվայ մէջ մոխրի կոյտ դառնում և հարիւրաւոր ընտանիքներ մատնվում են սովի և բաց երկնքի դաժանութիւններին։

Ահա դժոխային ծրագիրը, դժոխային ծրագրի դժոխային երրորդ կէտը, որի դիմաց մարդու մազերը բիզ բիզ են կանգնում։

Կոտորածի այդ վերջին կէտը—հետևելով Բագուի փետրվարի կարմիր օրերի ընթացքին—յետոյ ծրագրվեց. օրինակ Բագւում այդ անգամ մասսային հրդեհումներ տեղի չունեցան. մի երկու մեծ տների հրդեհումները տեղի ունեցան կոտորածի յաջորդ օրերում, երբ հայերի կողմից ուժեղ դիմադրութիւն եղաւ։ Երևանում հրդեհումների փորձեր տեղի ունեցան երկրորդ ընդհարման ժամանակ — մայիսին—երբ հայերը թուրքերին մի դաս տուեցին։ Շուշում և Գանձակում, ուր՝ հայերի դիմադրութիւնը ակներև էր, յարձակման հետ համարեա միաժամանակ տեղի ունեցան հրդեհումներ։ Ինչ են ցոյց տալիս այս բոլորը. այն, որ գնալով հրդեհումները դարձան սիստեմ և նոյն արագութեամբ, ինչ արագութեամբ որ հայը երևան բերեց դիմադրիր ոյժ։ Եւ մենք համոզված ենք, որ եթէ հայը ինքնապաշտպանութեան չըդիմէր, եթէ հայը անմեղ գառի պէս վիզ ծռէր իր դահիճ Նակաշիձէների և Տակայշվիլիների դանակի առաջ, հրդեհումներ տեղի չէին ունենայ, այլ հայերին կըքշեին բաց դաշտը և սև հարիւրեակները կըտիրանային հայի գոյքին ու տանն ու տեղին, ինչպէս Բագւում թուրքերը չէին քաշվում ասելու, որ Բագուն իրանցն է և հայերը եկւորներ են, թող քաշվեն գնան։ Բայց հէնց որ համոզվեցին, որ հայը այնքան էլ հեշտ մարսելու բան չէ, որ հայն էլ ինքնապաշտպանութեան բնազդ ունի, առաջ քաշվեց դժոխային ծրագիրը, Ներոնի այդ հրեղէն լեզուները։ Սրա ամենալաւ ապացոյցը Թիֆլիսն է, ուր տեսանք հրդեհ և ադմինիստրացիայի անտարբեր վերաբերմունքը։

Այժմ մեզ համար այնքան վտանգաւոր չեն կոտորածն ու թալանը, որքան հրդեհումները. մեր ինքնապաշտպանութիւնը և դիմադրական ուժը փոխել տուեց հայակերների գործելու տակտիկը։ Այն, ինչ որ կարող է անել մի անհատ, նոյն իսկ մի անչափահաս քուրդ կամ ռուս խուլիգանը նաւթում թաթախած լաթով եւ մի լուցկիով, չի կարող անել հարիւրաւոր զինված բօրչալեցին—աւազակ քուրդը։

Ահա այս վտանգը, դժոխային այս ծրագիրը մեր առաջ կայ և նա կը մնայ առ այժմ՝ մանաւանդ այն տեղերում, որ հայերը մեծամասնութիւն և ոյժ են կազմում, ինչպէս Թիֆլիսում, և ուր համարեա թէ ամեն օր հրդեհումների փորձեր են տեղի ունենում ինքնապաշտպանութեան միջոցների հետ զուգընթացաբար, պէտք է կազմակերպել հսկողութիւն և միջոցներ հրդեհաձգութիւնների դէմ իրանց անտարբերի և կեցողների միահամուռ աջակցութեամբ, որպէս այդ ծրագրվում է՝ այժմ Թիֆլիսում թաղային կամաւոր հրդեհաշէջ խմբերի միջոցով։

Ա—Դօ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Դեկտեմբերի 7-ին

Մենք ապրում էինք 6-րդ քաղաքամասում, Բեհթսայինսկայա փողոցում, Միրզոի տանը (այս տանը կպած տուած էր Ալիևին)։ Մենք ունէինք մէկ հայ և երեք թուրք հարևաններ։ Հայ-թուրքական ընդհարումի առաջին գիշերը մենք և մեր հարևան Մ. Հայրապետեանը իր ընտանիքով միասին լուսացրինք։ Առաւօտեան, տեսնելով, որ փոքր ինչ խաղաղութիւն է տիրում, մեր տանից վեց հատ խալիչա տարանք Հրեշտակապետաց եկեղեցին, կարծելով, թէ այնտեղից ոչ ոք չի տանի. (վերջը այս եկեղեցին էլ մեր բաղդից կողոպտվեց) իսկ մնացած գոյքերը, թողնելով տանը, դուռը փակեցինք և պաշտպանութեան համար գնացինք Սօլօլակի վերին մասը, յոյս ունենալով, որ մեր հարևան թուրքերը մեր գոյքերին ձեռք չեն տալ։ Բայց, դժբախտաբար, մեր յոյսերը ի դերև անցան։ Միւս օրը, երբ եկանք, որ գոնէ տեղաշորի մի մասը տանենք, բակի դուռը մեզ չը բացին. թէպէտ մենք կարող էինք ուրիշ կերպ բաց անել տալ, բայց հէնց այդ ժամանակ սկսվեց հրացանաձգութիւն և մենք ստիպված եղանք գնալ հեռանալու։ Երրորդ օրը եկանք նոյն նպատակով, բայց այս անգամ մեր թուրք հարևանները իրանցը կատարել էին, այնպէս որ, էլ կարիք չունէին դուռը չը բանալու մեզ։ Նրանք իրանց տան իրերը տեղափոխելիս մեր տանն էլ կատարեալ սրբել էին բառիս բուն նշանակութեամբ։ Սրբել էին նաև Հայրապետեանի տունը։ Մեր կողոպտված գոյքերի մէջ էր գտնվում Ագրստաֆայից եկած մեր բարեկամ Ա. Մէլիք Մանուչարեանցի մի մեծ սնդուկը թանկագին իրերով. բացի այս բոլորից, մեզանից տարել են նաև Վօրօնցօվսկայա փողոցում, Արարատեանի կալուածքում գտնված 500 պուդ խոտը և 2 սայլ փայտ։ Եւ ահա այսպէս մենք, ամեն կերպ մատնվելով մեր հաւատարիմ թուրք հարևանների ամենաանողորմ թալանի, վեց հոգով մնացել ենք դատ ու դատարկ, զրկվելով ամեն ինչից։

Ամուսիններ՝ Առաքել ու Մարգարիտ Առաքելեանց

II

Երևան, դեկտեմբերի 6-ին

Կարդալով Ա. Յարութիւնեանի յօդուածը (Մշակ № 240), որով նա երախտագիտական զգացմունքներ ու շնորհակալութիւններ է յայտնում Հ. Յ. Դաշնակցութեան, յանձին նրա գաղափարական ղեկավարների և անձնազոհ քաջարի զինուորների, որոնք Թիֆլիսում թուրք-հայկական ընդհարման ժամանակ անխորտակելի պատնէշ կանգնեցին թուրք խուժանին, և միանգամայն համամիտ լինելով այդ յօդուածում յայտնված մտքերին, ես մտաբերեցի մի ժողովրդական առած, որը, չը գիտեմ ինչ դէպքից է վեր առած, բայց շատ գործածական է գիւղական ոչ թէ միայն հայ, այլ և թուրք ժողովրդի մէջ։

Այդ առածն ասում է. «հայի յետի խելքը իմ գլխին լինի»։ Կրկնում եմ, որ չը գիտեմ ինչ դէպքից է առաջ եկել այդ առածը, բայց կարծում եմ, որ նրան, ինչպէս հիմունք, ծառայել է այն հանգամանքը, որ հայը որ և է հարցի մասին նպատակայարմար կարծիք է յայտնում այն ժամանակ, երբ այդ հարցի աննպատակայարմար որոշումը արդէն իրականութիւն է դարձել, ուստի յայտնած կարծիքը ներկայ հանգամանքներում արդէն անիրագործելի է, գոնէ ոչ ցանկալի չափով։ Եթէ հայ ժողովուրդը ամեն մէկ կեանքի նոր երևոյթ ցանկանար հիմնաւորապէս քննել և յետոյ արձակել նրա հասցէին իր վճիռը, գուցէ ազգային կեանքի հորիզոնում շատ և շատ գործեր աւելի նպատակայարմար ուղղութիւն ունենային, քան թէ գոյութիւն ունեցող ուղղութիւնը, որովհետև վճռողները ունեցել են ի նկատի միմիայն ներկան, բոլորովին մոռանալով ապագան։ Եւ ահա այդ հանգամանքը, որ ամեն մէկ հարց հայը վճռում է րօպէի ազդեցութեան տակ, համեմատվելով ներկայի պահանջին և բոլորովին ’ի նկատի չառնելով ապագայի պահանջը, ստեղծել է, կարծում եմ, հայի հասցէին վերոյիշեալ առածը։

Հայի մասնաւոր և հասարակական կեանքի մէջ շատ օրինակներ կան, որոնք հիմնովին կարող են ապացուցանել իմ յայտնած կարծիքը, բայց ես բերում եմ միմիայն մէկ օրինակ վերաբերեալ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան, որպիսի գործունէութիւնը, ցաւօք սրտի պէտք է ասեմ, ոչ թէ տարիներ առաջ, այլ նոյն իսկ այս նեղ և վճռական րօպէին անգամ ըստ արժանւոյն չէ գնահատվում հայ հասարակութեան կողմից։

Ինչ նախանձելի դրութեան մէջ կը լինէինք մենք այժմ, այս տագնապալի օրերում, եթէ հասարակութիւնը ժամանակին ճանաչած լինէր այդ գործունէութեան լուսաւոր ապագան և ըստ այնմ—օժանդակած և պաշտպանած։ Դեռ այդ ոչինչ, անցեալը անցել է, ցաւալին հետևեալն է։ Կովկասի նահանգական հայաշատ քաղաքներից մէկում վերջին հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Հ. Յ. Դաշնակցութիւնը աւելի մեծ գործ կատարեց, քան թէ վերջին օրերս Թիֆլիսում և այդ գործունէութիւնը, կարելի է ասել, աւելի էր գնահատվում տեղական հասարակութեան կողմից. բայց երբ տագնապալի օրերը անցան և հարցը հասաւ... դրամական օգնութեան... ահա, այդտեղ դաշնակցական մարմինը գնահատվեց ըստ արժանւոյն։ Ինչե՞ր միայն չխօսվեցին նրա հասցէին, ի հարկէ դէպի վատը... Ահա գնահատութիւնը։

Առաջ բերելով այս միջնադէպքը, հաւատացած եմ, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը այդ գնահատութիւնը չի տայ Հ. Յ. Դաշնակցութեան քաղաքի ղեկավարներին և մարտիկներին, այլ գնահատելով նրանց գործունէութիւնը ըստ արժանւոյն, իր բոլոր ոյժերով կաջակցի ինքնապաշտպանութեան գործին։

Տ-ան

III

Թիֆլիս, 7 դեկտեմբերի *)

Թոյլ տուէք, խնդրեմ, յայտնել ի գիտութիւն ընթերցող հասարակութեան, որ ես այլ ևս ոչ մի առնչութիւն չունեմ «Արշալոյս» օրաթերթի հետ, ուստի և այսուհետև այդ թերթի վերաբերմամբ ոչ մի բանում պատասխանատու չեմ ընդհանրապէս ընթերցողների և առանձնապէս իմ միջնորդութեամբ և երաշխաւորութեամբ «Արշալոյսի» համար հրաւիրված աշխատակիցների, թղթակիցների և գործակալների առաջ։

«Արշալոյսի» նախկին քարտուղար եւ խմբագրող Ե. Թօփչեան։

IV

Դեկտեմբերի 6-ին

Յանուն Կովկասի հայ արկածեալների ստացել եմ Ալիխանովի գործարանի կօշկակարներից 38 ր. 50 կ., Թիֆլիսի երկաթուղու մի բաժանմունքի հայ ծառայողներից 13 ր. (որանք խոստացել են վեց ամիս շարունակ նպաստել), բժ. Բարայեանից 20 ր., Նուխեցի Յարութիւն Ղուկասեանից 15 ր. և Շիրակ-գազէից 9 ր. 30 կ. (վերջին երկուսը ժողովել են իրանց բարեկամների շրջանում). ընդամենը իննսուն հինգ ռուբլի ութսուն կօպէկ։ Պ. խմբագիր, խնդրեմ բարեհաճեցէք «Մշակի» միջոցաւ ձեր համարներից մէկում տեղ շնորհել երկտողիս ի միաժամութիւն Պ. Պ. նուիրատուների։

Թեմ. Առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս

V

Թիֆլիս, նոյեմբերի 25-ին

Կարդացի «Մշակ»-ի մէջ Հայոց Կօնսիստօրիայի ծառայողների նորաձև աւտօնոմիական ուլտիմատումը, ուր, ի միջի այլոց, իմ դէմ բօյկոտ է յայտարարվում իմ կոշտ ու կոպիտ վարմունքիս համար։ Ճիշտն ասած՝ մնացի զարմացած, թէ ինչու պէտք է դրանք դժգոհ լինեն։ Փաստերը յիշողութեանս մէջ վերարտադրելով եկայ այն եզրակացութեան, որ պարոնները չարաչար սխալված են և դիտաւորեալ նպատակով անմիտ բօյկոտ սարքում, մանաւանդ, որ ես միշտ իրանց հետ «Ջանջանով» և ընկերային համաձայնքով եմ վարվել և խնդրել գործերի կատարումը և, որովհետև դրանք այդ իրանց համար կոշտութիւն և կոպտութիւն են համարում, ուստի՝ պէտք է ընդունել, որ այստեղ դաղտնիք կայ. և ի՞նչ։

Դատելով կօնսիստօրիայի անդամ՝ ծառայողները նկատեցին, որ ես իրանց ատամի մարդ չեմ, որ իրանց գործունէութեան վրա զանազան զեղծումների պատճառով, ծուռ աչքով եմ նայում, ուստի կամեցան մի կերպ ինձ յուսահատեցնել և հրաժարական տալու ճանապարհն բռնել, որ ասպարէզը իրանց մնայ, առանց կօնտրօլի, ինչ որ կամենան, այն անեն և ժողովրդի կաշին էլ քերթեն։ Ինչումն է կայանում իմ կոշտութիւնը և կոպտութիւնը, պ.պ. ծառայողներ. նրանում, որ ես՝ կօնսիստօրիա գալով՝ տեսնում եմ շատ անգամ առանց դուռը կորած շատ թշուառներ թէ քաղաքից և թէ գաւառներից, որոնք, աչքերը արտասուքով լցված, դիմում են ինձ մի ճար անել իրանց խնդիրները կատարել տալու. մէկը գանգատվում է, թէ մի ամիս է խնդիրը տուել, միւսը՝ թէ երկու ամիս է, իսկ երրորդն էլ՝ մինչև անգամ մէկ և մի քանի տարիներ. իսկ ես՝ յուզված այսպիսի տխուր տեսարաններից՝ քանիցս անգամ դիմած եմ և խնդրած, ձեր գլխի վերև կանգնած, որ գործը շուտով կատարվի և անշուշտ բաւարարութիւն տրվի խնդրատուներին։ Իմ պակասութիւնը նրանումն է արդեօք, որ Ատեանում, ս. Մինասի գործերը շատ դանդաղ կատարելու համար մի քանի անգամ յանդիմանութիւն ստանալու պատճառով, ես պնդել եմ գործավարական այդ տեսակ անտարբերութիւնը վերջացնել։

Ի հարկէ՝ ձեզ դուր է գալիս Կօնսիստօրիայից յանդիմանութիւն ստանալը. բայց չէ՞ որ միայն ձեր երեսին է լինում։ Միթէ պակասութիւն է՝ զգուշացնել, որ վկայականները առանց կնիքի չարձակվեն, պաշտօնական գրութիւնների տեղ՝ միայն դատարկ ծրարներ չուղարկվեն, կայացած որոշումների համար արձանագրութիւններ կազմվեն և ոչ թէ ցաւեցուցիչ անտարբերութեամբ խնդրատուները լացացնեն, գործերի զեկուցումները իր ժամանակին կատարվեն և ոչ թէ պօրտֆէյլներում և պահարաններում փտեն, ծառայողները առաւօտները որոշ ժամերին ճշտութեամբ յաճախեն և ոչ թէ ժամերով ուշանան, գործերի ցուցակը միշտ ներկայացնելի Ատեանին—կատարված կամ չը կատարվածը իմանալու, և ոչ թէ միայն յիշողութեամբ, կամ թղթերը քրքրելիս, բաղդի բերմամբ, գործ դուրս գալով հրահանգվի—և այլ այսպիսի շատ պակասութիւններ, որոնց մինչև այժմ Ատեանը մեծահոգութեամբ է տարել։ Դուր չի՞ գայ պ.պ. ծառայողներին, երբ կարծիք կը յայտնէք, թէ՝ կօնսիստօրիայի գործավարութիւնը հիմնովին անկարգ է կատարվում, գործերը վատ են պահվում և վաւերաթղթերից էլ կորչում-գոլորշիանում. ըստ շնորհիւ. դրանք փաստեր են։

Իմ ընկերաբար արտայայտած ճշտապահութիւնս և հսկողութիւնս բօյկոտի կարժանանայ միայն այն մթնոլորտում, որի ծառայողները կաշառակերութեամբ են վարակված։ Ցաւօք սրտի յայտնում եմ, որ այդ տխուր կօնսիստօրիայում լաւ բան է դրել։ Ես այդ վաղուց կամենում էի բաց անել և այժմ շատ շնորհակալ եմ պ. պ. ծառայողներից, որ մտադրութիւնս շտապեցրին։—Բանիցս անգամ իմ ծխերից յիսուն կօպէկով, մանէթով՝ և մինչև անգամ աւելի բարձր գումարով՝ փող եմ տուել, ի հարկէ՝ պահանջմամբ, չափաքեքրական մատեաններից տեղեկութիւններ հանելու և քաղուածքներ կազմելու համար. ուրիշների հետ ևս պատահած են այդպիսի դէպքեր զանազան վաւերաթղթերի համար և կամ գործերը առաջ գցելու նպատակով, ճիշտ հրահանգվելով այն նշանաւոր նովի, որի ճակատին գրված է—«փողն այստեղ ծլլնին, հոգին այնտեղ տըլլնին»։ բայց այս անգամ ամօթութեամբ չէ՞ որ աւելի հասարակ դասակարգն է տուժում, որից են ստացվում այդ պահանջները։ Անդամ դառնալով ես հետամուտ եղայ այդ սովորութիւնը ոչնչացնելուն, որը զգացին ճաշակողները և բօյկոտ յայտարարեցին ինձ։ Դուք եթէ, պարոններ, ծծելու նիւթական աղբիւր չունիք, թէ յայտնի և թէ անյայտ, հապա ինչպե՞ս էք կարողանում ամարանոցներում ընտանիք պահել և մինչև անգամ ամարանոցներ շինել։ Պահանջում էք աւելացնել ձեր ռոճիկը՝ ներկայ տագնապալից ժամանակը աչքի առաջ ունենալով՝ բայց միթէ դուք էք մտածում, որ այդ տագնապալից ժամանակը ժողովրդի վրա ազդելով, պակասում է ևս ժողովրդից սպասելիք վիճակային առանի արդիւնքը, հետևապէս՝ միթէ դուք չգիտէք է այդ հասարակութեան դրութեան մէջ մտնելը. չէ՞ որ ձեր պահանջը հասարակութեան վրա կը ծանրանայ։ Եթէ վերջը բարելաւ դրութեան ժամանակ աւելացնվի էլ, իմ կարծիքով, ձեզ չի կարելի այդ շնորհքը անել, որովհետև դուք ձեր սովոր ճանապարհը երբեք չէք թողնել, ջուրը իր ճանապարհով կերթայ։

Ձեր դրութեան մէջ դուրս էք բերել, որ բոլորը ամենաթշուառ դրութեան մէջ էք գտնվում և դրամով հասարակութիւնը սխալանքի մէջ ձգում։ Ի՞նչու չէք յիշում և՛ ձեր տարէնը երկու անգամ ստացած դրամական նպաստները. ինչո՞ւ չէք յիշել ամսական 116 ռ. ստացող և ձեզ հետ գործադուլ անող ծերունի, հանգստութեան կարօտ ատենադպիրին, որի կատարեալ դժոխային դանդաղութիւնը և հնամոլութիւնը հռչակ է ստացել։ Ինչո՞ւ չէք յիշում, թէ՝ ինչ մի հանճարեղ գործունէութեան պատճառով արքեպիսկոպոս Այվազեանցի որդու ուսման վարձ տրվում է Ատեանից «Աւետարանական ուսումնարանին» մի հարիւր քսան ռ., որը՝ աւելացնելով ռոճիկին՝ կազմում է ամսական մի բաւարար գումար, որից դժգոհ է։

Իմ վարմունքս, պարոններ, ձեզ կոշտութիւն և կոպտութիւն է համարվում, իսկ ձեր վարմունքը հասարակ ժողովրդի հետ, որոնց շատ անգամ ամենազզւելի կերպով պատասխաններ էք տալիս, լացացնում և ճանապարհ գցում, և որոնք, վիզները ծռած, հայոց հոգևոր իշխանութեան հասցէին են յիշոցներ շպրտում ձեր երեսից. միթէ այդ կոշտութիւն և կոպտութիւն չէ։ Այդ բոլորը նկատուած է և յանդիմանութիւն յայտնած, բայց ի՞նչ օգուտ, քանի որ ձեզանից ամեն մէկը՝ ատենադպիրից սկսած մինչև Պետան, մէկ-մէկ փաշայ է իրան երևակայում։ Ինչքան թաղեցիներ թողնէք, պատուաւոր խմբերի հետ միանաք և նրանց պաշտպանութեան դրօշակի տակ մտնէք, դուք դարձել ձեր արած «մեղքերի» պատճառով հասարակութեան արդար դատաստանից չէք կարող խուսափել, որի համար ես այժմ ամբողջ Թիֆլիսի թեմի հայ հասարակութեանը հրաւէր եմ կարդում և խնդրում իր տեսած զեղծումները յայտնել ինձ, որպէսզի կօնսիստօրիայում ծառայողների նեխած մթնոլորտը առ միշտ մաքրվի և նոր, թարմացնող հոսանք մտցնվի։ Հերիք է, ինչքան Թիֆլիսի թեմի հայ հասարակութեան թշուառ դասակարգը ձեր նորաձև գիրութեան և փոքրիկ-փոքրիկ փաշաների ճիրանների մէջ հեծեծանք եղաւ, մինչև այժմս հոգևոր իշխանութեան անհուն ներողամտութիւնը ձեզ վրա չարաչար տեսնելով։

Գրիգորիս քահ. Երզնկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մինիստրների Խորհուրդը աւարտեց Պետական Դումայի ընտրութիւններին վերաբերեալ նախագծի քննութիւնը։ Առ այժմ կաբինետի կարծիքը ընտրութիւնների մասին հետևեալն է։ Կաբինետի հինգ անդամներ, այն է Ֆիլոսոֆօվ, Նեմեշաեվ, Տիմիրեազեվ, Տօլստոյ և Շիպօվ այն կարծիքը յայտնեցին, թէ պէտք է երկաստիճեան սիստեմի ընդհանուր ընտրողական իրաւունք տալ. կաբինետի մնացած անդամները ընդարձակված ընտրողական օրէնքի կողմն էին, համապատասխան օգոստոսի 6-ի օրէնքի և հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հիման վրա։ Բացի գիւղացիների ներկայացուցիչներից, վերջինները մտադրութիւն ունեն Պետական Դումայում մտնել ներկայացուցիչներ և բանւոր դասի կողմից, մօտաւորապէս մի բանւոր 150 հազար բանւորներից, այն հաշւով, որ բանւորների կողմից բոլոր պատգամաւորները լինեն ոչ աւելի քան 10—12 մարդ։ Ցարսկօ-Սելօ կառաջարկվեն երկու կարծիքներն էլ—մեծամասնութեան և փոքրամասնութեան։ Թէ ո՛ր կարծիքը յաղթութիւն կը տանէ—դեռ յայտնի չէ, բայց, լուրերի համեմատ, ընդհանուր ընտրութիւններ չեն տրվի։ («Русь»)։

—

Անցեալ օրը Թիֆլիսում եկած մեծ ձիւնի ազդեցութեան տակ հեռագրական և հեռախօսական թելերը կտրատվել վայր էին թափվել։ Մի քանի «բոկոսներ» հաւաքում էին այդ թափթփված թելերը, որոնց մի ծայրը դեռ կախված էր սիւներից։ Բայց դրանցից մի մասը վայր էր կախված էլէքտրաքարշի թելերի վրայով։ Թելեր հաւաքողներից մէկը, չը լսելով պօստ-հեռագրական մի պաշտօնեայի նախազգուշացումները, ուզեց հաւաքել այդ թելերն էլ։ Հազիւ ձեռք տուեց թելերին, երբ էլէքտրական զօրեղ հոսանքի ազդեցութեան տակ ցնցվեց ու վայր ընկաւ. նա ջղաձգվում էր, բայց չէր կարողանում ձեռքից բաց թողնել թելերը։ Հազիւ մի անցորդ հովանոցի ծայրով դուրս կորզեց թելերը ուշագնաց զոհի ձեռքից։ Թափվեցին նրա վրա և ձիւն ածելով երեսին, հազիւ ուշքի բերին թշուառին։

—

Երէկ, դեկտ. 8-ին, Թիֆլիսի դումայի դահլիճում կայացաւ պօստ-հեռագրական ծառայողների միտինգը։ Զբաղմունքի առարկաներն էին. 1) Մայրաքաղաքի լրագիրների ընթերցումը— ի հարկէ միայն պօստ-հեռագրական գործադուլին վերաբերեալ կտորների։ 2) Պօստ-հեռագրական պաշտօնեաների գործադուլի ներկայ վիճակը Ռուսաստանի ներքին նահանգներում և մայրաքաղաքներում։ 3) Թիֆլիսի և առհասարակ Կովկասի պօստ-հեռագրական գործադուլար պաշտօնեաների նիւթական վիճակի քննութիւնը և ձեռք առնված միջոցները։ 4) Զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչների և առանձին հռետորների ճառեր գործադուլը շարունակելու կամ դադարեցնելու մասին։ Բոլոր մասնակցող պաշտօնեաների հոգեկան տրամադրութիւնը շատ լաւ էր. բոլորը վստահ էին, որ իրանց սկսած գործն արդար է և հասարակութեան համակրանքն իրանց կողմն է։ Միտինգի ընդհանուր եզրակացութիւնն այն էր, որ պէտք է գործադուլը շարունակել մինչև իսկական յաղթանակ տանելը։

—

Դեկտեմբերի 7-ին Թիֆլիսի օպերայի գալլէրէայի յաճախորդներն ապշեցին, երբ տոմսակ վերցնելով մտան գալերկա և տեսան մեծ թւով զինված կազակներ այնտեղ բազմած։ Հասարակութիւնը պահանջեց կամ տոմսակները յետ առնել և դրամը տալ, կամ տեղափոխել առաջ ունեցողներին բալկոն։ Թատրօնի կարգադրիչները դուրս տարան կազակներին և հանգստացրին հասարակութեանը։

Թիֆլիսի աշակերտների նոր կազմված քաղաքական կլուբը խնդիր է տուել թոյլտութիւն ստանալու հրատարակելու „Другъ Пролетаріата“ անունով մի թերթ։

---

[1] Անհերքելի լինելով որ իր վկայութիւնը ոչ ոքի համար գին չի ունենայ։

*) Պատճէնը յանձնված է «Արշալոյսի» խմբագրութեանը։ Ե. Թ.

—

Երէկվանից բացվեց Թիֆլիսում վրաց հոգևորականութեան ընդհանուր ժողովի նիստը, որի զբաղմունքի առարկան է վրաց եկեղեցու ինքնագլխութիւնը։ Թիֆլիս են եկել 100-ից աւելի հոգևորական ներկայացուցիչներ։

—

Թիֆլիսից Բաթում գնացող մարդատար գնացքները ամեն օր լցվում են բազմաթիւ ճանապարհորդներով, որոնք գնում են Քութայիս և Քութայիսի նահանգի զանազան տեղերը։ Ճանապարհորդներից շատերը, տեղ չը գտնելու պատճառով, տեղաւորվում են վագոնների կտուրների վրա։

—

Քվիրիլից հաղորդում են «Սխիվի» նոր լրագրին, որ դեկտ. 4-ին անյայտ անձեր յարձակվել են տեղական վարչութեան վրա և տարել են 64 հրացան ու մօտաւորապէս 90 ատրճանակ։ Պահապանները դիմադրութիւն չեն ցոյց տուել։

—

Փոխարքայի անձնական պահակախումբ կազակների մէջ էլ մտել է բողոքելու ոգին։ Նրանք անցեալ օրերը խնդիր էին ներկայացրել իրանց վարչութեանը, որ դժգոհ են իրանց կեանքի պայմաններից և խնդրում են բարելաւել իրանց դրութիւնը։ Վարչութիւնը և իշխանաւորներն ապշեցին. «կազակ» և «դժգոհութիւն»... կը նշանակէ «հիմքերն» են խախտվել... Իսկոյն սկսեցին կազակներին խիստ քննութեան ենթարկել։ Երևաց, որ մի կազակ գրել բերել է, բոլոր միւսներն ստորագրել են։ Իսկոյն այդ ըմբոստ կազակին բանտը նետեցին։ Դա խիստ ազդեցութիւն գործեց բոլոր կազակների վրա և բոլորը միաբերան սկսեցին բողոքել ու պահանջել իրանց ընկերին ազատել բանտից, իրանց պահանջները կատարել և իրանց կեանքի պայմանները բարելաւել։ Իշխանութիւնը տեսնելով գործի վատ վախճանը, անմիջապէս ազատեց բանտարկվածին և բաւարարութիւն տուեց կազակների պահանջներին։ Ի միջի այլոց՝ կազակները պահանջում էին, որ իրանց թէյ ու շաքար տրվի, որ արքունական նուէրները հաւասարապէս բաժանվեն և այլն... Դժւարը առաջին «բողոքն» է. դրանից յետոյ բողոքի ոգին արագ կը զարգանայ, կաճի ու կը զօրանայ։

—

Թիֆլիսի պրաւօսլաւնի սէմինարիայի շինութեան մէջ զետեղել են 400 զինւոր իրանց 24 օֆիցէրներով։ Այդ երկու բատալիօն զինւորները Երևանեան գնդից են։—Հսկայական առաջադիմութիւն. կրթութեան վայրերից մէկն էլ դարձաւ զօրանոց։

—

Պետերբուրգի Նիկոլայ I կայսրի Ինստիտուտի կովկասեան թոշակը Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական Սուլթան-Կրիմ-Գիրէյը յատկացրել է նոյն ինստիտուտի II կուրսի ուսանող Օսման Ուժախովին։

—

Կարսից հաղորդում են «Իվէրիային», Դէրբէնտեան գունդը որոշ պահանջներ արեց իր իշխանաւորներից։ Իշխանութիւնը խոստացաւ իրագործել, բայց դրա փոխարէն նոյեմբերի 23-ին ուղարկեց մի գունդ կազակ նրանց խաղաղացնելու։ Կազակները ոչինչ չարին զինւորների դէմ, նրանց հետ սկսեցին շըրջել փողոցներում, փափախները վեր նետել և «ուրա» կանչել։

—

Մեր հասարակութեան յայտնի գիւղատնտես պ. Աւետիք Սահակեանը թոյլտւութիւն է ստացել Թիֆլիսում հրատարակելու հայերէն մի ամենօրեայ լրագիր «Յառաջ» անունով։ Երևի լրագիրը կը սկսէ երևալ ներկայ դեկտեմբերի վերջերին։—Թիֆլիսում հրատարակվելու է և մի նոր ռուսերէն սօցիալ-դէմօկրատիական օրգան «Впередъ» անունով։

—

Դեկտեմբերի 7-ին, չորեքշաբթի, Թիֆլիսի Մինգրէլեան զօրագնդի պահեստի զինւորներից 400 հոգի արձակուրդ ստացան և Բագուի երկաթուղու գնացքով ճանապարհ ընկան իրանց տները՝ Ռուսաստանի խորքերը։

—

Թիֆլիսի առևտրական ուսումնարանի հոգաբարձական խորհրդի և ուսուցչական մասնաժողովի վճռի համաձայն ուսումը վերսկսվեց այդտեղ չորեքշաբթի, դեկտեմբերի 7-ից։

—

«Թիֆլիսի Ժողովարանի» վիճակը շարունակում է մնալ նոյն աննախանձելի վիճակի մէջ. գիշերապահների խնդիրը հաստատ և վերջնական կերպարանք չըստացած լինելով՝ յաճախորդներ չկան երկիւղից։ Դեկտեմբերի 3-ին աւագները նշանակել էին ընդհանուր ժողով «ժողովարանի» վիճակի մասին խորհրդակցելու, սակայն, երևի քաղաքիս դեռ ևս անապահովութիւնից քաշվելով, հաւաքվել էին 34 հոգի, ուստի և ժողովը չըկայացաւ և յետաձգվեց նոյն ամսի 18-ին, ցերեկով։ Այս սեզոնից դեռ ևս ոչ մի ներկայացում կամ երեկոյթ չէ կազմվել։ Ընդհանրապէս հասարակական կեանքը քաղաքումս կանգ է առել, նրա զարկերակը թոյլ է խփում։ Այս էլ տարւայ բերմունք է, որի հետ պիտի առ ժամանակ հաշտվենք։

—

Չորեքշաբթի, դեկտեմբերի 7-ին Թիֆլիսի էլէքտրաքարշ և ձիաքարշ երկաթուղու գնացքները դադարել էին. յորդահոս ձիւնից ճանապարհի գծերը միանգամայն ձիւնի խորը շերտով ծածկված էին։ Ամբողջ օրը բոլոր գծի վրա հարիւրաւոր ամեն տեսակ մշակներ էին բանում ճանապարհը մաքրելու համար, այնպէս որ, հազիւ կարելի կըլինի վաղվանից գնացքների շրջակայութիւնը վերականգնել։

—

Խնդրում ենք յայտարարել ձեր յարգելի թերթում, որ՝ երեքշաբթի դեկտ. 13-ին, առաւօտեան ժամը ճիշտ 10-ին, Ն. Հ. Հ. Դ. IV, V և VI դասարանների աշակերտները հրաւիրվում են դպրոց։ Մի խումբ աշակերտներ։

—

Ներքին գործերի մինիստր Դուրնովոյի պաշտօնից հեռանալը զուրկ է որ և է հիմքից։ Նրա դրութիւնը շատ ամրապնդված է համարվում այն բանից յետոյ, երբ նրան աջողվեց մի յայտնի աստիճան վերականգնել պօստը և հեռագիրը («Р. Сл.)։

—

Արդարադատութեան մինիստր Մանուխին, «Своб. Нар.» լրագրի խօսքով, հրաժարական տուեց։ Վերջինս արդարադատութեան մինիստրութիւնը սկսեց մեծ քանակութեամբ զեկուցումներ ստանալ պրօկուրօրից ադմինիստրացիայի անկանօն գործողութիւնների, ոստիկանութեան զեղծումների և անգործունէութեան մասին ջարդերի և անկարգութիւնների պատճառով։ Դատաստանական գործիչների այդ զեղծումները թէ իրանց տեղերում, և թէ ներքին գործերի մինիստրութեան կենտրոնական վարչութեան մէջ մեծ դժգոհութիւն յարուցին։ Պրօկուրօրական գործողութիւնների կանոնաւորութիւնը ստուգելու համար վճռված է սենատօրական քննութիւն նշանակել։ Դուրնովօ համաձայնվեց, որ քննութիւն կատարվի, բայց պահանջեց, որ նրա նիւթը ուղարկվի ներքին գործերի մինիստրութեան քննութեանը։ Մանուխին, համարելով այդ վարմունքը խախտումն իր իրաւունքների, հրաժարական տուեց։ Հրաժարականն ընդունվեց, և նրա տեղը նշանակվում է Կիևի դատաստանական պալատի պրօկուրօր Լօպուխին։

—

Պետական խորհրդի տնտեսութեան դէպարտամենտը, քննելով ծովային վարչութեան բիւջէտը 1906 թւի համար, վճռեց 38 միլիօն կրճատում անել նրա մէջ, որը կազմում է համարեա ամբողջ բիւջէտի $^1/_2$-ը։ Կրճատված է գլխաւորապէս նաւաշինութեան վերաբերեալ յօդուածը։

—

Անդրկովկասեան երկաթուղիների գլխաւորի պաշտօնակատար ինժեներ Բախմանինով միջնորդութիւն յարուցեց երկրի բարձր իշխանութեան առաջ՝ զինւորական պահակները ուժեղացնելու մասին Բաթում, Դալլեար, Շամքոր և Ալլաշլի կայարաններում և թողնել պահակները այն կայարաններում, ուր նրանք կան, հակառակ դէպքում ստիպված կը լինի այդ կայարանները փակել։

—

Չորեքշաբթի, դեկտեմբ. 7-ին, առաւօտեան ժամը 12-ին քաղաքային խորհրդի դահլիճում կայացաւ քաղաքիս տանտէրերից կազմած մի ժողով՝ քննելու քաղաքիս բնակիչների անշարժ և շարժական կայքերի ապահովութեան խնդիրը ընդդէմ զանազան խուլիգանական սևագնդերի հրկիզելուց և թալաններից։ Ժողովը ղեկավարում էին քաղաքային խորհրդի իրաւասուներից իշխ. Ն. Արղութեան, բժ. Խուդադեան, պ. պ. Ա. Բաբեան և Փիրալեան։ Ժողովին ներկայ եղողների խօսակցութիւններից և պատմածներից պարզվեց հետևեալը. 1) ներկայումս քաղաքիս ամեն մասերում կազմված են թաղական միտինգներում տանտէրերից և կենողներից ընտրված բիւրօներ, որոնք կազմակերպել են թաղական գիշերապահներ և որոնք հերթով արդէն գործում են գիշերվայ ժամի 8-ից սկսած մինչև լուսաբաց, 2) քաղաքիս 10-ը մասերից մանաւանդ 4-դ և 5-դ քաղաքամասերի գոյքերի ապահովութեան գործը ամուր հիմքերի վրա է դրված, որովհետև այդ թաղերի գիշերապահները քաղաքիս «կուսակցութիւններից» են վարձված, որոնք ամեն պատրաստականութիւն ունեն առաջն առնելու, ինչպէս հարկն է, ամեն տեսակ պատահարի և ոտնձգութիւնների, սևահոգիների կողմից, 3) մնացեալ քաղաքամասերում թաղական գիշերապահ խմբակներից մեծ մասը անբաւարար են կազմած, հարկաւոր զէնքերը չունին, մի քանի տեղ բնակիչները գիշերապահութիւն են անում ձեռքին բռնած զէնքի տեղ՝ կացիններ և գագանակներ (հաստ փայտ), 4) իշխանութեանը քաղաքային վարչութեան կողմից դիմել են զէնքի համար, սակայն ստացել են մերժումն. քաղաքիս մէջ ծախու զէնք չէ երևում (ժողովականներից մի քանիսը հաստատում են, որ զինավաճառ Կուրցը ունի զէնքի պահեստ, սակայն կամենալով թանգ ծախել՝ թագցնում է և հատ հատ վաճառում է տներում) և հարկաւոր է մի կերպ ճարել կամ բնակիչների ունեցածից գիշերապահներին տալու համար և կամ ապսպրել արտասահմանից որ և է գործակալի միջոցով, 5) ամենահարկաւոր խնդիրն է՝ գիշերապահների կազմակերպութիւններին տալ օրինական (լէգալ) կերպարանք՝ քաղաքային խորհրդի միջոցով։ Ժողովականների խօսակցութիւնները պտտում էին այդ կէտերի շուրջը։ Կարծիքների և մտքերի փոխանակութիւններից յետոյ ժողովը որոշեց հետևեալը. 1) քաղաքի բնակիչների կայքերի ապահովութեան համար կազմելիք պահակազինւորների գործը դնել քաղաքային վարչութեան հսկողութեան և իրաւասութեան ներքոյ, 2) անմիջապէս կազմել մի կենտրոնական գործադիր (օրգանիզացիօնն) բիւրօ, որը բաղկացած լինի ներկայումս գոյութիւն ունեցող թաղական բիւրօների նախագահներից և նրանց հետ թաղական բիւրօյի մի մի անդամից և յանձնել նրան քաղաքիս բոլոր թաղերի ինքնապաշտպանութեան համար կազմվող գիշերապահ խմբերի, նրանց զինաւորելու և ամբողջ կազմակերպութեան գործը, 3) այդ գործադիր կենտրօնական բիւրօյի նիստը նշանակել հինգշաբթի, դեկտեմբերի 8-ին՝ քաղաքային դահլիճում։

—

Օրով բանող մշակները ևս իրար մէջ խօսք կապելով որոշել են իրանց օրավարձը՝ այն է ամեն մի ժամի համար պահանջել 15 կոպէկ. այսպիսով, եթէ ամառ առաւօտեան ժամի 6-ից սկսեն բանել և երեկոյեան ժամի 6-ին վերջացնեն, նրանք օրավարձ պիտի ստանան 12×15=1 ր. 80 կոպ. կամ երեքպատիկ աւելի առաջվայ ստացածներից։ Դեկտեմբերի 7-ին, երկաթուղու գծի բոլոր մշակները այդ հաշւով էին բանում քաղաքումս։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիս, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից.
ԱՌԱՒՕՏԵՆԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՉԻԺՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Չ. Ի. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Չ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Յ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայ. հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԴԵՒՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Խ. Թ. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՁԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ [illegible] և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նախասարդեան

Правленіе Кавказскаго Общества исправительныхъ земледѣльческо-ремесленныхъ колоній и пріютовъ проситъ Г.г. членовъ Общества пожаловать въ помѣщеніе Судебной Палаты въ четвергъ 22 декабря 1905 года въ 2 часа дня, для участія въ чрезвычайномъ Общемъ Собраніи Членовъ Общества.

Предметъ занятія:

I) Вопросъ о закрытіи колоніи.

Примѣчаніе Общее Собраніе считается состоявшимся при участіи въ немъ не менѣе 20 членовъ (§ 17 устава Общества.) 1—3

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայէլ Գեղեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կորգանովսկայա փող. № 20 Վերայում։ Սեփական տ., տէլէֆօն № 791։ (ա. օ.) 39—150

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկևիչյա փողոց. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա.օ.) 27—100

Լոյս տեսան և վաճառվում են ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՑԻ և ՊԱՏԻ 1906 Թ.
„ՇԻՐԱԿ“
Պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
(Ութերորդ տարի)
համառօտ բովանդակութիւնը

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է վաճառականական, բժշկական, առողջապահական, բնագիտական, գիտական, կաթնատնտեսական, մեղուաբուծական, տնտեսական, ճանապարհորդական, բանասիրական, կենսագրական, գիւղատնտեսական, բանաստեղծական—ազգային քնար, պատմական—Այծեմնիկ՝ հայ հերոսուհու յաղթանակը Անիում, Լեզու կարող՝ ճշգրիտ անցք, Ո՞վ էր Վարդան Մամիկոնեանը և այլ տեղեկութիւններ։ Վիճակագրութիւն հայերի—Թիւրքիայում, Պարսկաստանում և Ռուսաստանում, գլխաւոր բնակավայրերը (հայ-թրքական կռուրածների ասիթով)։ Զաւարճալիք, բերումներ, խնդիրներ, հանելուկներ, վիճակներ։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մաքեր և աֆօրիզմներ, եկեղեցական և ազգային տօների բացատրութիւններ, հայոց հեթանոսական սովորութիւններ, թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, բժշկական, առողջապահական տեղեկութիւններ. խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց։ Ազգային քնար—բանաստեղծութիւններ. հայկական կեանքից և հայոց պատմութիւնից նշանաւոր դէպքեր—Թաթարների արշաւանքը. տնտեսական, արհեստագիտական խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւն, կենսագրութիւններ, նոր անեկդօտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական - ազգային երգեր, լէյլեներ։ արկածալի և հերոսական դէպքեր Զէյթունցիների և Սասունցիների կեանքից։ Տեղեկութիւններ մահմեդական վարդապետութեան մասին։

Իւրաքանչիւր օր, առաջին երեսների վրա տպագրված է միմի բանաստեղծական կտոր, համարեա բոլոր հայ բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացքը դէպի ազգն ու հայրենիքը։

ՏԱԽՏԱԿԸ ներկայացնում է Արագածը, Շիրակի դաշտը հայ գաւթանաւորներով, Անիի աւերակների առաջ նստած հայ կինը հովուի սրնգի նուագի տակ փնտրում է իր հայրենիքի անցեալ փառքերը։ Նկարը գունազանգոյն է և կարող է սենեակի զարդ ծառայել։

ՊՐԷՄԻԱՆ միացրած է ծոցի օրացոյցի յաւելուածին մօտ 60 երես—«Վերածնութիւն Հայաստանի», հայերի մատուցած ծառայութիւնը ռուսներին Կովկասի տիրապետութեան ժամանակ, խոստումներ և յոյսեր Հայաստանի անկախութեան և այլն և այլն։

«Շիրակ» օրացոյցները զարդարված են մի շարք գունատիպ պատկերներով։

Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ.։ Գումարով գնողներին լինում է մեծ չափով զեղչ։

Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ“ Карапету Апинянъ.—արտասահմանից—Alexandrople, Karapet Apinian (Caucase).

Աւելի մանրամասն բովանդակութիւնը առանձին թերթով տպագրված ցանկացողները կարող են ձրի ստանալ։

8—10 Կարապետ Ափինեան

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Օպերային արտիստների ընկ.
Ուրբաթ, դեկտեմբերի 9-ին, կը ներկայացվի
„Лиса Патрикѣевна“ (Нитушъ)
Կոմիքական օպերա 3 գործ. 4 պատկ. երաժ. Գերվէի։
Մասնակցում են տ.տ. Դօնսկայեա, Էյխենվալդ, Նիկիտսկայեա, Եգօրեվա, Օստրօվսկայեա, Լօսևա, պ.պ. Կարելին, Վօլսկի, Դրակուլի, Տօմաշեվիչ, Դեմիդենկօ, Սիմբիրին։
Սկիզբը երեկոյեան 8 ժամին։
Աշակերտական տոմսակները ծախվում են ամեն օր գլխաւոր կասսայում 7¾ ժամին։
Դեկտեմբերի 8-ից տեղերի գները պակասեցրած են։
Շաբաթ դեկտեմբերի 10-ին կը ներկայացվի Բենեֆիս Մ. Բ. Սօկօլսկու՝ 1) «ՍԵՎԻԼԵԱՆ ՍԱՓՐԻՉ» 2) Կօնցերտային բաժին։
Պատրաստում են ներկայացնելու օպերաներ՝ «Князь Игорь,» «Рогнѣда», «Красное Солнышко».

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նախասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը։ 32—100

ԲԺԻՇԿ
Բ. Ա. ՊԱՊՕՎԵԱՆ
Մասնագէտ—քթի, կոկորդի և ականջի։ Ընդունում է հիւանդներին—առաւ. 10—12½ ժ. երեկ. 5—7 ժ.
Հասցէն. Միքայէլեան փողոց տ. Ֆօրբերի № 157. 10—10

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար։
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.
հասցէ—Արասաբադեան հրապարակ № 9, մուտքը Շէկօֆնիկեան փողոցից № 1։
(եր.հ.կ.) 12—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ո.) 28—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 63—300

ՏՊԱԳՐՈՒՄ ԵՆՔ
ԱՅՑԵՏՈՄՍԵՐ և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՆՐ ԳՈՐԾԵՐ
Վաճառվում են մեծադիր և բաց-նամակ պատկերներ։
Դիմել՝ фото-цинкогр. С. Согомоняна, Базарная, 22. Тифлисъ. (հ. կ. ե.) 2—3

ՄԻ օրիորդ, որ գիտէ կարել, ուեթել և երեխաներին խնամել ցանկանում է վերցնել պատուէրներ, նոյնպէս պատրաստ է տներում կարել և երեխաներին խնամել։ Հասցէն Песковская ул. д. Эфіанджіанца № 8. հարցնել Մնացականեանցին։ 3—3

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 1է ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր. ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր. գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՅԱՌԱՋ“
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,
ՈՐԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆԵԼՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ։

Խմբագրութեան անդամներն են. Ահարոնեան Աւետիս, Դաւթեան Յովնան, Թոփչեան Եղիշէ, Խաժակ Գ., Նազարեան Լիպարիտ, բժ. Օհանջանեան Համ., Իւսուֆեան Յովհաննէս։

Մօտիկ աշխատակիցներն են. Բժ. Աթաբէգեան Լևոն, Ա—Դօ, Զարզարեան Ռուբէն, Զօրեան Ստեփան, Ջաւարեան Սիմէօն, Թումանեան Յովհաննէս, Իսահակեան Աւետիք, Լէօ, Լիսիցեան Ստեփան, Մալումեան Խաչատուր, Յովհաննիսեան Միքայէլ, Յովհաննիսեան Տիգրան, Շիրեան Սիմէօն, Պապովեան Ալէք., Սամուէլեան Խաչ., Տիգրանեան Սիրական, բժ. Օհանեան Քրիստ. և ուրիշները։

ԲԱԺԱՆԵԳԻՆՆ Է

Թիֆլիսում՝ տարեկան 6 ր., ամսական 50 կոպ.։ Թիֆլիսից դուրս՝ տարեկան 7 ր., ամսական 60 կոպ.։ Արտասահմանում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.։

Դիմել՝ Тифлисъ, редакція «Арачъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Haradj».

Խմբագրատունը գտնվում է Թիֆլիսում, Սերգիևսկայեա փողոց № 9։

Խմբագիր—Ա. Սահակեան
1—3 Հրատարակիչ—Մ. Նալբանդեան

ОТКРЫТА ПОДПИСКА
на еженедѣльную газету учащихся
„Э Х О“
Нашъ лозунгъ: „Свободная автономная школа, въ свободной Россіи!“

Редакція приглашаетъ учащихся всѣхъ среднихъ учебныхъ заведеній какъ мужскихъ, такъ и женскихъ принимать участіе.

Ближайшая цѣль редакціи, это сдѣлаться дѣйствительнымъ органомъ всѣхъ учащихся.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	Съ достав.	Безъ дост.	Съ перес.
На 1 мѣсяцъ	25 к.	20 к.	30 к.
„ 2 „	50 к.	40 к.	60 к.
„ 3 „	70 к.	60 к.	90 к.
„ 4 „	90 к.	80 к.	1 р. 20 к.
„ 5 „	1 р. 10 к.	1 р. — к.	1 р. 50 к.

Подписка принимается въ конторѣ газеты, а также въ отдѣленіяхъ ред. конт. Въ I-й женской гимназіи ученицы VIII кл. Амираговой, во II-й женской гимназіи ученицы VII кл. Соболь, въ III-й женской гимназіи ученицы VII кл. Косабовой, въ III-й мужской гимназіи въ ред. газ. «Отголоски», въ IV женской гимназіи ученицы VII кл. Трофимовой, въ музыкальномъ училищѣ ученика средн. курса А. Туманова.

Редакція и контора помѣщается въ I-й мужской гимназіи, входъ съ Гимназической улицы, въ помѣщеніи читальни, открыта отъ 10 до 12 ч.

ԻԴԷԱԼ—ՑՆՈՐՔ ԴՈՒԽԻ
(IDÉAL RÊV)
ՈՒԺԵՂ, ՏԵՒՈՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՃԵԼԻ ՀՈՏՈՎ.
«ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.»
(ա.ք. 20) 5 6

ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ
(GRAND-PRIX)
С.-ПЕТЕР-
БУРГЪ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
76—80

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.